ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՒԵԼԵՑՈՒՊ ՏԱՐԲ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Քօլօմիճակի եւ Աւլաբարճակի փողոցների աջկիւնում.
1890

Ustensiles de cuisine

ԱՇՆԱՆ ՏԵՐԸԸ.

Հնան տերևը, ծառիցը պոկ-
ւած,
Օդի մէջ ուրախ վեր-վար է
անում.
Կարծես մի թռչնիկ, վանդակից պրծած,
Իր ազատութեան ծօնն է կատարում:

—

Փչում է քամին, նա խըշխշում է,
Եւ անհոգ կերպով առաջ է թռչում:
—Խեղճ ողորմելի, ջանքըդ իզուր է.
Դու դէպի անդարձ կորուստ ես գնում...

Ռ. ԹԱՓԻՍՏԱՆ

ՀԻՔԻԱԹՆԵՐԻ ԱՆՄԱՀ ՍՏԵՂԾՈՂԸ

Պատկերներ Անդերսէնի կեանքից

3.

ԸՆՏԱՆԻՔԻՑ ՀՐԱԺԵՇՏ ՏԱԼԸ

որբարանից փախուստ տալուց յետոյ Անդէրսէնը նստեց իր սենեակումը, տխուր ու տրտում, սկսեց աղօթք անել Աստուծուն եւ հագուստ կարել իր տիկնիկների համար: Ծնօղացը դուր էր գալիս նրա այդ պարապմունքը, որովհետեւ մոտիկը էին նրան դերձակի մօտ դնել: Իսկ նա թէեւ շատ էր ուզում դերասան դառնալ, բայց մայրն ընդդէմ լինելով այդ պարապմունքին, ինքն էլ համոզուեց վերջապէս, միայն նրա համար, որ դերձակի մօտ աւելի շատ կտորտանքներ ձեռք կըբերէ իր տիկնիկների հագուստի համար:

Ինչքան երեխայ էր դեռ, չընայած, որ արդէն տասնըչորսերորդ տարումն էր: Այդ միջոցին նա յաճախում էր չքաւորների ծրի ուսումնարանը, ուր համարեա թէ ոչինչ չէին սովորեցնում, բայց մայրն ուզում էր պահել այնտեղ մինչեւ կրօնաքննութեան եւ հաղորդութեան օրը, որից յետոյ մոտիկը էր մի օրինաւոր վարպետի յանձնել:

Հաղորդութեան օրւայ համար հանգուցեալ հօր հագուստներից Անդէրսէնի համար մի բաճկոն կարեցին: Իր բոլոր կեանքումը նա դեռ այսպէս պճնւած չէր մի նոր հագուստում: Առաջին անգամ տեսաւ ոտներին կօշիկները, այն էլ երկայն ճիտքաւոր: Եւ ինչպէս ճրոճրոում էին այդ կօշիկները. բոլոր ժամուորները կարող էին տեսնել, որ նրա կօշիկները նոր էին: Որ աւելի լաւ ցոյց տայ ամենքին իր ճրոճոան թազա կօշիկները, նա վարտիկի փոխքերն ամիփոփեց երկար ճիտքերի մէջ: Ուղիղն ասած՝ նա այդ առաւօտ աւելի իր կօշիկների վրայ էր մտածում, քան թէ Աստծու: Վերջը՝ ուշքի գալով՝ անկեղծ սրտով զղջաց եւ երեխայի նման սկսեց ներողութիւն խնդրել Աստծուց:

Մանուտութեան արարողութիւնը վերջանալուց յետոյ մի թունդ կռիւ սկսւեց մօր եւ որդու մէջ: Մայրը պնդում էր որ Քրիստիանը վարպետի մօտ երթայ, իսկ նա ասում էր՝ ինչո՞ւ ի զուր ժամանակ կորցնենք, քանի որ ինքս գիտեմ, որ ղերձակ դառնալ կարող չեմ:

—Մայրիկ, ասում էր տղան,—դու թոյլ տուր ինձ, ես երթամ Կօպէնհագէն (նա այդ ժամանակ այդ քաղաքն աշխարհիս երեսին ամենից մեծն էր համարում): Ես իմ կուլաբում բաւական շատ փող ունիմ հաւաքած, ամբողջ տասներեք արծաթի:

—Ի՞նչ գիտի շինես դու Կօպէնհագէնում, հարցրեց մայրը զարմացած:

—Ես ուզում եմ երեւելի մարդ դառնալ: Մեծ մարդկանց պատմութիւնից ինձ յայտնի է, որ կեանքի մէջ արգելքների դէմ պէտք է մաքառել, մեծամեծ զոհողութիւններ ու զրկանքներ կրել եւ երբ այդ բոլորը կըտանես, ամեն արգելքների կըյաղթես, այն ժամանակ երեւելի մարդ կըդառնաս:

—Իսկ եւ իսկ քո հայրն ես, ինչպէս մէկ խնձոր կէս արած, բացագանչեց մայրը: Հայրդ էլ միշտ փախուստ էր տալիս տանից, բայց ինչ դառաւ: Իսկ դու, որ դեռ մի անփորձ երեխայ ես, ինչ կարող ես անել: Գլխիցդ հանիր այդ ցնորքները, մնա մեզ մօտ եւ մէկ գործով պարապիր, ինչպէս վարւում են բոլոր խելքը գլխին մարդիկը:

Մայրը մերթ փաղաքշելով եւ մերթ բարկանալով աշխատեց ազդել կամակոր որդու վրայ, բայց ի զուր. նա պինդ կանգնեց իր մտադրութեան վրայ, եւ խեղճ մայրն ստիպւած էր զիջանել:

—Էհ, դու գիտես, ուր ուզում ես՝ գնա, ասաց մայրը:— Երևի այդպէս է գրւած քո ճակատին. գնա, Տէր ընդ քեզ . . .

Քրիստիանն իսկոյն պատրաստւեց ճանապարհ ընկնելու:

Սեպտեմբերին էր այս: Շատ գեղեցիկ էր եղանակը, երբ մէկ օր ճաշից յետոյ, Օդենզէի դռնից դուրս եկաւ տասներչորս տարեկան մանուկ Անդերսէնը՝ մի մահակ ձեռքին եւ մի պարկ շալակին: Ամբողջ քաղաքից նրան ճանապարհ գցողները երկու կին էին,—մայրիկը եւ տատիկը, որի մազերը բոլորովին ափսոսակել էին կսկծից: Դրանք երկուքն էլ անց կացրին Քրիստիանին մինչեւ մեծ ճանապարհը, եւ նրա հետ այնտեղ սպասեցին դելիժանսին, որ պէտք է Անդերսէնին վերցնէր ինչպէս „կոյրի“, այսինքն՝ ծրի պիտի վերցնէին՝ իրանց հոգուն վարձք անելու համար եւ տանէին մինչեւ Կոպենհագէն:

Շեռումը երեւաց դելիժանսը, կառապանը փութարարեց եղջիւրը, ժամանակ քիչ կար, պէտք էր հրաժեշտի ողջոյնը տալ: Մայրը զանազան խրատներ էր տալիս, իսկ տատիկը, առանց մի խօսք ասելու,

հեկեկալով փաթաթեց թոռնիկի վզովը: Քրիստիանն այս վերջին անգամն էր, որ տեսնում էր նրան, հետեւեալ տարին տատիկը մեռաւ, եւ երբ որ արդէն մեծացած էր Անդէրսէնը իր վերապարծին ուզեց տեսնել իր տատի գերեզմանը աղքատների գերեզմանատունը, չկարողացաւ գտնել:

Ուրացիններից հեռանալով, Անդերսէնն սկսեց լաց լինել մօրից զրկուած երեխայի նման: Բայց կառքումը այնպէս յարմար տեղ էր գտնել, արեգակն այնպէս պայծառ էր լուսաւորում, կառապանի եղջիւրն այնպէս ուրախ հնչում, որ մանուկը շուտով մոռացաւ իր տխրութիւնը: Երկնքի երեսով շարիշար անցնում էին էլող թռչունների երամները, իսկ երկրի վրայ մեր մատաղահաս ճագուկը, մենակ մնացած, թռչում էր շտապով դէպի իրան անյայտ մի երկիր:

4.

ԻՐ ԴԱՍՔԻՆ ԹՈՂՆԱԾ

1819-ի սեպտեմբերի 5-ին Անդէրսէնը մտաւ Կոպէնհագէն: Այդ օրը ուրախալուծ էր, այս պատճառով մի առանձին կենդանութիւն էր տուացել քաղաքը: Քրիստիանը կարծեց, թէ միշտ էլ այդպէս է լինում, բայց այս նրան չզարմացրեց, նա աւելի յափշտակուած նայում էր մեծամեծ շէնքերին, արուեստներին, ժողովրդի զուգին, եւ շատ ուրախ էր, որ վերջապէս հասել էր իր փափագին:

Նրա զրպանումը տասը մանէթ էր մնացել միայն երեքը ծախսել էր ճանապարհին: Նա հիմա իջել էր մի փոքրիկ պանդոկում. այնտեղ ճաշ կերաւ, հանգստացաւ մի քիչ, եւ յետոյ գնաց ուղղակի դէպի թատրոնի շինութիւնը: Նա երկար եւ ուշադրութեամբ զըն-

նեց այդ չինութիւնը, հաստատ հաւատացած լինելով, որ ահա այդտեղ պիտի գտնի նա իր երկրորդ ծնընդարանը:

Միւս օրը զուգեց իր նոր հագուստով, հագաւ ճոճրոան կօշիկները, փոխքերքը ծիտքերի տակումն արաւ աւելի գեղեցկութեան համար (այդպէս էր կարծում՝ ինքը), գլխին էլ դրաւ իր հօր գլխարկը, որ լայն լինելով, շուտ շուտ ընկնում՝ էր աչքերի վրայ, եւ այսպէս պճնազարդուած այցելութեան գնաց մադամ Շալլին, որ այդ ժամանակ մեծ հռչակ ունէր իբրեւ կաքաւչուհի եւ որի անունով մի յանճնարարական նամակ էր բերել Անդերսէնը իրան ծանօթ մի կազմարարից:

Նրան երկար ժամանակ ներս չէին թողնում՝ տիրուհու մօտ. աղախինները Անդերսէնի վրայ նայելով՝ փսփսոցն ընկան եւ սկսեցին հռհռալ, հէնց ինքը մադամ Շալլն էլ հազիւ կարողացաւ ծիծաղը զսպել, երբոր ներս մտաւ նրա մօտ Անդերսէնը ճոճոան կօշիկներով եւ հին տարազի հագուստով:

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց տիկին կաքաւչուհին.

—Ես ուզում եմ՝ թատրօն մտնել, պատասխանեց Անդերսէնը,—էլ՛ք կամենալ ինձ հարցաքննել . . .

Այս ասաց Անդերսէնը եւ առանց քաշւելու, նստեց աթոռի վրայ, կօշիկները հանեց եւ սկսեց ներկայացնել մի տեսարան, որի գլխաւոր դերը անգիր էր արել: Նա ձեռքն առաւ հայրական գլխարկը թմբուկի փոխարէն եւ պարելով՝ երգեց—

"Աշխարհիս հոգսերը չեն խնայում՝
Ոչ իշխաններին, ոչ հարուստներին". . .

Անդերսէնը այնպէս զբաղուեց, ոգեւորուեց, այնպէս ծամածռութիւնները արաւ եւ ձեռաշարժութիւնները, որ կաքաւչուհի տիկինը ղողոդ-ղողոդ վախեցաւ, կարծելով,

թէ մի խեղաւզարի է պատահել, որից որքան կարելի է շուտ պէտք է ազատուիլ: Տղան ինքը նկատեց այդ եւ զգաց որ իր ընկերը փչացրեց հափից դուրս յափշտակելով: Սուս ու փուս հազաւ ճոճոան կօշիկները եւ մադամին գլուխ տալով՝ հեռացաւ. էլ ինչ սպասէր նրանից, որին այնպէս վախեցրեց . . .

Միւս օրը բոլոր ուժը հաւաքելով, գնաց ուղղակի թատրօնի դիրեկտօրի մօտ եւ խնդրեց որ իրան ընդունի ծառայութեան մէջ: Դիրեկտօրը նայեց տղայի վրայ ոտքից մինչեւ գլուխ եւ ասաց.

—Դուք բեմի համար պէտքական չէք, շատ էք նիհար:

—Նիհարութիւնն ի՞նչ թերութիւն է, պարոն դիրեկտօր, ասաց Քրիստիանը.—դուք միայն ինձ տեղ տուէք մի փոքր ոտճկով, ես կսկսեմ աւելի կուշտ ուտել, եւ կըգիրանամ անշուշտ:

Դիրեկտօրին դուր չեկաւ այս պատասխանը, նա հայհոյեց Անդէրսէնին՝ յանդուգն անուանելով, եւ հրամայեց դուրս գնալ:

Տղան դուրս եկաւ փողոցը բոլորովին յուսահատուած, առաջին անգամ զգաց ինքն իրան մեն—մենակ, անպաշտպան եւ անօգնական եւ յուսահատութիւնից ուզեց տեղն ու տեղը մեռնել: Բայց յանկարծ նրա միտքը լուսաւորուեց, նրա միտն եկաւ, որ ինքը մենակ չէ, որ Աստուած իր հետ է, նա, ամենից յուսալի բարեկամը, չի թողնիլ նրան եւ կօգնէ, երբ հարկաւոր կըլինի: Չէ՞ որ շատ անգամ է կարդացել գրքերումը, թէ կեանքը մի փշոտ ճանապարհ է, թէ հարկաւոր է երկրիս վրայ համբերել կարողանալ, ժամանակաւոր նեղութիւնների հետ հաշտուել, եւ երբ դառնութեան դպրոցից կանցնես, յետոյ կըգայ այն, որին մարդիկ անուանում են „բախտ“:

Պանդոկումը պարտքը վճարելուց յետոյ Անդերսէնի գրպանումը մնաց միայն մի մանէթ: Դրանով ապրել կարելի չէր, հարկաւոր էր ընտրել երկու հարիւրից փոքրագոյնը—կամ պէտք է գնար նաւապետներից մէկին խնդրէր, որ նա խղճար նրա վրայ եւ ծրի յետ տանէր Օդէնզէ, կամ պէտք է իր համար մի գործ փնդրէր մի որ եւ է արհեստաւորի մօտ: Կրկին տուն վերադառնալ—որքան նւաստութիւն Անդերսէնի համար . . . Ոչ, աւելի լաւ է ամենաստոր մի պաշտօն գտնել օտար քաղաքում, քան ծաղր ու ծանակ դառնալ եւ բամբասանքի առիթ մայրենի քաղաքում: Քրիստիանը գնաց մի թամբ կարողի մօտ, որ լրագրերում յայտարարել էր, թէ աշակերտներ է ընդունում իր մօտ: Նրան ուրախութեամբ ընդունեցին: Վարպետը պատուական մարդ էր, բայց նրա հակառակ՝ քարգահները եւ միւս բանւորները շատ վատ էին վարւում նրա հետ, եւ այնքան կրկնեցին, թէ նա յիմար է, անընդունակ եւ անշնորհք է, տեսնելով, որ այդպիսի նկատողութիւններից նա շատ նեղանում եւ քարկանում է, որ վերջապէս տղան ճարահատեալ խնդրեց վարպետին, որ իր հաշիւը տեսնէ եւ ճանապարհ դնէ:

Եւ ահա նա կրկին մնաց դառարկածեռն եւ անօգնական: Սրտնեղութիւնից գլուխը կորցրած՝ ամբողջ օրը մի փողոցից միւսն անցաւ, բոլոր քաղաքը պտտեց եւ չիմացաւ ո՛ւմ դուռը գնայ: Յանկարծ նրա գլխումը մէկ միտք փայլեց: „Ես հո լաւ ձայն ունիմ: Եթէ ես մի վրայ միայնակ երգել չկարողանամ, իմքի մէջ հո կարող եմ երգել“: Այսպէս մտածելուց յետոյ նա

ուղղակի դիմեց կօնսերւատօրիայի դիրեկտօրին, որ, ինչպէս լսել էր, Սիղօնի ազգականով մի Իտալացի էր: Նրա որ գնաց նրա ընակարանը, նրան ընդունեց մի տարիքով եւ հիւրասէր տնտեսուհի: Անդէրսէնը յուզած սրտով պատմեց նրան իր կեանքի քոլոր պատմութիւնը, եւ այդ քարի կինը երեւի այդ քոլորը պատմեց տանտիրոջը, երբ ներս գնաց իմաց տալու նրան, որ մի անծանօթ պատանի նրան տեսնել է ուզում, որովհետեւ շուտով երեւաց Սիղօնին իր հիւրերի հետ, որոնք եկել էին նրա մօտ ճաշելու: Նրանք քոլորն էլ մեծ հետաքրքրութեամբ նայեցան տղայի վրայ: Այդտեղ կային նշանաւոր երաժշտապետներ, քանաստեղծներ, եւ այլ արւեստագէտ անձինք: Դրանց քոլորի առջեւ Քրիստիանը հարկադրւած էր իր շնորհքը ցոյց տալ երգելով եւ ոտանաւորներ ասելով: Եւ նա այդ քոլորը կատարեց այնպէս անկեղծ եւ խոր զգացմունքով, որ վերջումը չըկարողացաւ իրան զսպել, այնպէս լաց եղաւ, որ լացացրեց իր քոլոր լսողներին էլ:

Սիղօնին խոստացաւ յանձն առնել տղայի ճակնի կրթութիւնը, միւսներն էլ խրախուսեցին Անդէրսէնին եւ նրանցից մէկը՝ Վէյսէ երաժշտապետը, որ իր մանկութեան ժամանակ նեղութիւններ շատ էր քաշած, առաջարկեց տղայի օգտին դրամական օժանդակութիւն ժողովել, եւ մի քանորդ ժամ՝ չանցած՝ 70 տալեր փող հաւաքեցին եւ յանձնեցին Անդէրսէնին: Այդ օրը Կոպէնհագէնում՝ դժւար թէ մի ուրիշը գտնւէր, որ այնքան քախտաւոր զգար իրան, ինչպէս Հանս Քրիստիան Անդէրսէնը: Երեկոյին նա ջերմ՝ աղօթքով գոհացաւ Երկնային Բարերարիցն ու Օգնականիցը, եւ մի սրտաշարժ նամակ գրեց մօրը այս անակնկալ յաջողութեան մասին. մայրն էլ շտապեց իր այդ ուրախու-

թեանը մասնակից անել քոլոր բարեկամներին:

Բայց տարաբախտաբար այդ ուրախութիւնը երբար չըշարունակուեց: Վեց ամիս անցաւ, դիրեկտօրը նրան իր տան անդամներից մէկն էր համարում, երգեցողութեան դասերը ծրի էր տալիս, բայց այդ տարին ծմեռը սաստիկ ցուրտ էր, Անդերսէնն այնքան նիւթական հնար չունէր, որ տաք մուշտակ գնէր իր համար. նա մրսեցրեց քունը եւ ընդ միշտ զրկուեցաւ իր սիրուն ձայնիցը, որով յոյս ունէր մեծ բախտի հասնել:

Այս դէպքը մի զարհուրելի հարուած էր Քրիստիանի համար: „Երգիչ դառնալս չըյաջողուեց.—եկ փորձեմ կաքաւիչ դառնալ, գուցէ այդ յաջողի“: Նրա բարեկամներից մէկը՝ մեներգիչ Դալմանը փորձեց տղային կաքաւել սովորեցնել, բայց, աւաղ, Արդերսէնի կոպիտ ոտները դիւրաթեք լինելու ընդունակ չէին, եւ պարահանդէսներում աշխատում էին մի հեռու անկիւնում պահել, որ տեսնող չըլինի նրան: Վերջապէս մէկ օր էլ որ շատ ծիծաղեցին վրան, նա փախաւ թատրօնական քեմիցը, եւ ընդ միշտ մնաս բարով ասաց թատրօնին, որ մինչեւ այն օրը նրա երեւակայութեան միակ աստուածն էր:

Ինչքան պիտի ուրախանար ապագայ հոչակաւոր գրողը, եթէ այդ անյաջող օրերում կարողանար ներկայացնել իրան, թէ շուտով պիտի գայ այն ժամանակը, երբ ինքը պիտի թագաւորէ թատրօնական քեմի վրայ ոչ իբրեւ դերասան, այլ իբրեւ հեղինակ. . .

Արդէն երկու տարին անցել էր, ինչ որ Անդերսէնը գօպէնհագէնումն էր, բայց դեռ ոչ մի բան չէր սովորել, ոչ մի բանի չէր հասել: Նրա համար հաւաքած փողը վաղուց էր հատել: ծանօթներին իր ներկայութիւնը յայտնել ամաչում էր. օրերով քաղցած էր մնում եւ տանջւում էր ծածուկ, բայց յոյսը չէր կոր-

գնում՝ եւ սպասում՝ էր լաւագոյն օրերի: Նա մի սեւնեակ ունէր վարձած մի պատուի մօտ, որ ամեն առաւօտ նրան սուրճ էլ էր խմեցնում: Իսկ ճաշելու՝ իբր թէ իր քարեկամների մօտ էր գնում: Եթէ քարի պատան իմանար, թէ որտեղ է ճաշում՝ նա եւ ինչպէս, անշուշտ մասնակից կանէր նրան իր պարկեշտ սեղանին: Պատանի Քրիստիանը ամենից շատ գնում՝ էր թագաւորական այգին, ուր քաշւում՝ էր մի թաքուն անկիւն, եւ խիտ թուփերի մէջ մի նստարանի վրայ ուտում՝ էր ծածկաբար մի կտոր չոր ու ցամաք հաց: Բայց այդ ոչինչ էր նրա համար. նա դեռ պատանի էր, այդպիսի դառնութիւններին դիմանալու ոյժ ունէր. երբեմն միայն րոպէական յուսահատութիւն էր գալիս վրան, բայց հէնց որ մի փոքր լոյսի նշոյլ էր փայլում՝, իսկոյն այնպէս էր աշխուժանում՝ եւ ոգեւորւում՝, որ էլ ճանաչել չէր լինում՝ նրան: Ինչ եւ իսկ երեխայ: Ամեն ինչ զմայլեցնում՝ էր նրան, ամեն ինչ ուրախացնում՝: Նա պատրաստ էր ոտանաւորով գովաբանել արեգակը, եւ ծաղիկները եւ կապոյտ երկինքը: Նա մի գեղեցիկ օր թագաւորական պարտիզում՝ զբօսնելիս այնքան յափշտակւեց իր առջեւ բացւած գեղեցիկ պատկերներով, որ վազեց ու փաթաթւեց մի բարձր եւ գեղեցիկ ծառի եւ համբուրեց, ինչպէս մի կենդանի էակի: Պահապանն այս տեսնելով՝ ձայն տուաւ այգեպաններին եւ ասաց.

—Այս տղան խելագար է, պէտք է սրան բռնել...

Անդերսէնն այս լսեց թէ չէ՝ իսկոյն փախաւ եւ գլխապատառ դուրս վազեց պարտիզից եւ յետ գնաց դէպի քաղաքը, ինքն իրան մոնծելով, „մի՞թէ ուրիշների նման չեմ՝ եւ, ի՞նչ կայ ինձանում՝ առանձին. ինչո՞ւ եմ՝ ես ուրիշ տեսակ:

Անդերսէնի այդ „ինքնատեսակութիւնը՝“ ամենից

վաղ նկատել էր մի ջահել աղջիկ—քարոզը շրջանից. Տեօնլար-Լունդ ազգանունով, որ առաջին անգամ հանդիպել էր Անդերսէնի հետ Օդենզէում, եւ նոյն օրը նրան մի վարդ էր ընծայել: Օրիորդն այդ ժամանակ կոպենհագէնում էր իր ծնօղաց հետ: Անդերսէնը գնաւ նրան եւ նա մեծ հոգացողութիւն ունեցաւ տղայի մտաւոր զարգացման վրայ: Օրիորդի շնորհիւ նա ծանօթացաւ Կոլբիորսէնի ընտանիքին, որ մինիստրի այրին էր, եւ նրա ամուսնացած աղջկայ հետ, որ ամեն ամառ կենում էր Րաբէկ քանաստեղծի ամարանոցումը; Մայր եւ աղջիկ մեծ գթութիւն ցոյց տուին Անդերսէնին, միշտ հրաւիրում էին իրանց մօտ եւ ամեն անգամ ընդունում էին մեծ հիւրասիրութեամբ: Րաբէկ քանաստեղծն ինքը իր պարտէզումը տղային հանդիպելիս խօսք ասել պէտք չէր համարում, մէկ անգամ միայն, շատ մօտկացաւ նրան, երեսին խոր նայեց եւ իսկոյն երեսը շրջեց նրանից, բայց նրա հակառակ տիկին Րաբէկը առաջին հանդիպելուն պէս խօսեց Անդերսէնի հետ եւ հրաւիրեց իր մօտ: Այդ միջոցին Անդերսէնը կատակերգութեան պէս մի բան էր գրել, եւ մէկ անգամ առաջարկեց տիկնոջը, թէ ուզում է կարդալ իր գրածը նրա մօտ: Նա ուրախութեամբ համաձայնեց. կարդացէք, ասաց, տեսնենք ինչ էք գրել, բայց մի քիչ լսելուց յետոյ, բացագանչեց. դուք այդ բոլորը մեր յայտնի քանաստեղծներից էք արտագրել: „Այո՛, պարզմտութեամբ պատասխանեց Անդերսէնը,—բայց շատ անմման ուտանաւորներ են, այնպէս չէ՞“, եւ շարունակեց կարդալը:

Շուտով սրանից յետոյ Անդերսէնն էլի մէկ անգամ գնաց տիկին Րաբէկի մօտ այցելութեան եւ պարտէզումը նրա մօտ քիչ նստելուց յետոյ վերկացաւ, որ գնայ Կոլբիէրսէնենց մօտ, „Սպասեցէք, ասաց տի-

կինը եւ նրան մի փունջ թարմ վարդ տալով՝ ասաց, "տարէք այս փունջը նրանց ընծայ: Ես հաւատացած եմ, որ տիկին Գօլբիէրսէնը մեծ հաճոյք կը զգայ, տանալով այս փունջը քանաստեղծի ձեռքից": Այս խօսքը տիկինը կատակով ասաց, բայց Անդէրսէնը առաջին անգամ լսելով քանաստեղծ կոչումը իր անունը կցած, ուրախութեան արտասուք փայլեց նրա աչքերում, այնքան ցնծաց նրա հոգին, եւ այդ րոպէից, ինչպէս ասում է ինքը, նրա սրտի մէջ վառեց հեղինակելու տաղանդը, եւ ինչ որ մինչեւ այն օրը նրա համար մի խաղալիք եւ զւարճութիւն էր, այժմ դառնում է նրա կեանքի նպատակը:

Բայց ցնծութեան առաջին բորբոքը շուտով սկսեց հանգչիլ, երբ որ Անդէրսէնն սկսեց լրջօրէն մտածել թէ որքան քիչ է զարգացած ինքը եւ որքան վատ կրթւած: Պէտք էր ուսում ստանալ, պէտք էր, որքան կարելի էր, շատ գիտութիւն ձեռք բերել:

Որպէս զի հնար ունենայ զրքեր ձեռք բերելու, Անդէրսէնը "Աւազակներ" վերնագրով մի եղերգութիւն գրեց եւ առանց հեղինակի անունն ստորագրելու, ինքը տարաւ ձեռագիրը թատրօնի տեսչութեանը: Անցաւ մի քանի ժամանակ, ինչեր աստես, որ այդ միջոցին չէր երեւակայում Անդէրսէնը, մէկ էլ յանկարծ յետ է ստանում իր ձեռագիրը, վրան հետեւեալ նկատողութիւնը գրած; „Սրա հեղինակը դեռ պէտք է գրել-կարդալ սովորէ ու յետոյ սկսէ հեղինակութիւն անել: Պարզ երեւում է, որ նախակրթարանի ուսմունքն անգամ սովորած չէ": . . .

Այս նկատողութիւնը կայծակի հարւածի նման շշմացրեց պատանի հեղինակին: Հիմա ինչ անէր խեղճը: Արդեօք ողորմութիւն խնդրէր քարի մարդկանցից, կամ աղքատների խնամատար տիկիններից դի-

մէր: Ոչ: Աւելի լաւ է, որ էլի ինքն իր համար մի ելք գտնէր, ինքն օգնէր իրան, հայցելով Աստուծոյ պաշտպանութիւնը: Եւ Աստուած օգնութեան հասաւ նրան:

Նա մի քանի օր առաջ մի ուրիշ պիէս էր գրել եւ ուղարկել թագաւորական թատրոնի դիրեկտորին Կօլլինին: Մէկ օր գնաց դիրեկտորի մօտ, պատմեց իր հանգամանքը, յայտնեց որ ինքն է պիեսի գրողը: Կօլլինը նրան շատ սառն ընդունեց եւ գրածի մասին ոչինչ չասաց, թէեւ արդէն կարդացել էր: Բայց երեք օրից յետոյ Անդերսէնը յետ ստացաւ իր ձեռագիրը, վրան գրած, „Ներկայացնելու համար յարմար չէ, բայց շատ մասերում՝ ոսկի հատիկներ են ցրուած. յոյս ունինք, որ պատանի հեղինակը, մի քանի տարի օրինաւոր ուսում՝ ստանալով՝ աւելի գեղեցիկ աշխատութիւններ կընծայէ մեր ըեմին:

Կօլլինը, չընայած իր սառն ընդունելութեանը, մի շատ բարեգութ մարդ էր: Անդերսէնին տեսնելով՝ նա իսկոյն նշմարեց որ նրանում՝ մի քան կայ, որ գեղեցիկ ձիրքեր ունի, եւ թոյլ չըպիտի տալ, որ կորչին: Հէնց որ գնաց թագաւորի մօտ, որ այդ ժամանակ Փրիդրիխ վեցերորդն էր: նրան պատմեց համառօտ կերպով տաղանդաւոր պատանու տիրալի պատմութիւնը; Թագաւորն իսկոյն թոշակ նշանակեց Անդերսէնի համար մի քանի տարուան, իսկ քարթր ուսումնարանական տեսչութիւնն էլ, դարձեալ Կօլլինի միջնորդութեամբ, Անդերսէնին ընդունեց ծրիաթոշակների կարգումը: Թագաւորական թոշակը կարգադրուած էր որ մաս մաս տրւի Կօլլինին, որ նա իր ձեռքովը տար Անդերսէնին եւ հոգատարութիւն ունենար պատանու բարոյական եւ մտաւոր յառաջադիմութեան վրայ:

„Հարազատ հայրս կարող չէր Կօլլինից աւելի անել“

բացագանչում՝ չերմուխեամբ Անդերսէնը»: Ես նրան եմ՝ պարտական քոլոր իմ ամենագոյն եւ քոլոր իմ լաւ կողմերիս համար, որովհետեւ նա իմանում էր ներշնչել իմ մէջ հակումն դէպի բարին եւ գեղեցիկը. դէպի ազնիւն ու առաքինին»:

Այստեղից սկսում է Անդերսէնի կեանքի էքիաթի երկրորդ գլուխը,—անծոռնի բարի ճագուկը կերպարանափոխելով կարապ է դառնում եւ թեւերն սկսում է բանալ թռչելու համար»:

Գ. ԱՂԱՑԱՆՑ

(Կը շարունակուի)



Սեր կահկարասիները:



Ա Ն Ո Ի Ր Ջ

Ընկած էի մարտի դաշտում,
Գնդակներով խոր խոցված,
Ու մահն արդէն իր ցուրտ գրկում
Ամփոփում էր ինձ անդարձ։

Ու մի անգամ, վերջին անգամ
Սոսկ աչերըս բաց արի,
Կապոյտ երկինքն էր անսահման
Փուած գլխիս հովանի։

Ու թափանցիկ խաւարի մէջ
Կարծես տեսայ շատ դէմքեր,
Գունատ, մաշուած ցաւով անվերջ,
Տեսայ ծանօթ ըստուերներ։

Չէին նրանք կամ հայր կամ մայր,
Ո՛չ քերկրանքիս ընկերները,
Վաստակած ու մրրրկահար,
Մերկ էին այն սեւ կրծքերը։

Լուռ, մտախոհ, դիակիս շուրջ
Կանգնած դիտում էին ինձ,
Միայն երբեմն անձայն միմոնջ
Հոսում էր նրանց շրթմներից:

Ծանկարծ արցունք փայլեց, տեսայ
Պլշած, աղօտ աչերում . . .
Այդ րոպէին ես իմացայ
Որ զուր չանցաւ կեանքս երկրում : . .

Եւ մի անհաս երանութեան
Խոր նինջ պատեց իմ հոգին,
Եւ փակեցի ես յաւիտեան
Իմ աչերը մշագին . . .

ԵՐՐԱՆԴ ՓԱԼԱՆ.

ՍՊԱՆԱԾ ՀԱՑՐԸ.

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒՄԻՑ)

Ե.

Բրահիմ-խանը նոր էր սպահան եղել։ Հինգ օր շարունակ Շուշու թուրքերը սուգ էին արել Քերիմ-բեգի դիակի վրայ. ինքը, խանը, քանի-քանի անգամ էր սրբել իր աչքերը, քանի-քանի անգամ անմխիթար սգաւորի նման իր ծնգներն էր ծեծել, երբ բեգի ազգականներն ու բարեկամները դիակը վերցրած բերել էին նրա դուռը, կուրծք էին ծեծել, մազեր էին քանդել «շախսէյ» կանչելով։ Երիտասարդ բեգին նա շատ էր սիրում և երդւել էր սպանւածի հօր ու մօր մօտ, որ Քերիմ-բեգի գլխի վոխարէն 15 հալի գլուխ պիտի կտրւի։ Խանը կատաղած էր, բայց թէև կատաղած, չէր թոյլ տալիս որ բերդի թուրքերը իրանց ասածն անեն. նա պահպանեց Շուշու հայերին։ Շուշում այդ ժամանակ մի 50 տուն հայ կար, որոնց խանն էր զանազան տեղերից քաշել, բերել. այդ հայերը հարկաւոր էին. նրանց պատճառով շրջակայ հայ գիւղացիք գալիս էին Շուշի, վաճառելու բաները էին բերում. և իրանք Շուշու հայերն էլ խանութներ էին բացել, առուտուր էին անում։ Սակայն այդ հայերի թուրքերի բանը դժւար կըլինէր, բայց սրքան շատ էր թուրքերի բարկութիւնը, որ պահանջում էին խանից թոյլ տալ մի

գիշերը կատորել այդքան մարդկանց։ Խանն իմանում էր թէ որն է իր օգուտը, և թոյլ չըտուաւ։ Եւ բացի դըրանից մի օր մի այնպիսի բան պատահեց, որ ամենքին ուրախացրեց։ Բռնել էին Թիւլի-Արղումանի հօրը, Սարգսին, և բերել էին խանի մօտ։ Բռնողը Մէլիք-Նահնազարի մարդկանցից մէկն էր, որ խանից թանգագին ընծայ ըստացաւ։ Թուրքերը լսեցին, մոռացան Քէրիմ բէգի սուգը և անհամբեր սպասում էին, թէ ինչ կանէ խանը ստապակի հօրը։—

Հէնց այդ մասին էր մի օր խորհուրդ անում Իբրահիմ-խանը։ Նստած էր իր տան առաջ, շաքրում փռած գորգի վրայ։ Ամառնային օր էր, նա թէյնկն էր տուել փափուկ բարձերին, շուռ-շուռ մօտեցնում էր նարգիլին իր բերանին և թանձր ծուխ էր հանում կարմիր խէնայով ներկած մազերի մէջից, որոնք պատած էին նրա բերանն ու ծնօտը։

Նարդիլէի ծխից նրա հոգին փառաւորւում էր և նա նայում էր այն լայն ու մեծ հրապարակին, որ ընկած էր տան առաջ։ Խանի տունը բոլոր տներից հեռու էր և բոլոր տներից բարձր ու գեղեցիկ։ Լայն հրապարակը խանը նշանակել էր ժողովրդի զբարճութեան համար։ Այդտեղ խաղում էին լարախաղացներ, մենամարտում էին ուժեղ փահլեւաններ, հակաճառում էին յայտնի դէրվիշներ, այդ տեղ խօլեր ու աքաղաղներ էին կռւացնում և ժողովուրդը թավուած այդտեղ, մտիկ էր տալիս, զբաղճանում, հրճուում։ Բայց այդ օրը մեծ հրապարակը բոլորովին դատարկ էր. նրա մէջ տեղը ցցած էր մի մեծ գերան, որ միշտ անշարժ էր մնում։ Այդ գերանի մօտ էին կատարում խանի նշանակած պատիժները. կտրում էին մարդկանց գլուխները, ականջ ու քիթ։ Եւ ժողովուրդը այդ արնաթաթախ սիւնը տեսնելով, իր զբարճութեան ժամանակ էլ իմանում էր թէ ինչ է խանը։—

Խանի կողքին ծալապատակ նստած էին երկու մոլլաներ։ Դրանցից մեկն էր Թաւրիզից եկած մոլլա-Մուխտարը, մի մարդ, որ մեծ պատիւ ունէր շիա թուրքերի մէջ։

—Գիտես, մոլլա-Մուխտար, այնտեղ, այն քարձր գերանի տակ պիտի բոլոր անպիտաններին մեղայ ասել տամ, ասաց խանը, ցոյց տալով գերանը։

—Իլուլլահ, պատասխանեց մոլլան.—Աստուած քո գլուխը ողջ պահէ և այն ժամանակ ով կըլինի այն մըրջիւնը, որ կըհամարձակի քո հզօր ոտի տակից դուրս գալ։—

Խանը ծիծաղեց և գոհունակութիւն յայտնեց մեծ Ալլահին, որ այժմ յաջողութիւն էր տալիս իրան։

—Քո յաղթութիւնը կատարեալ կըլինի, մեր գլխի տէր խան, խօսեց միւս մոլլան.—միայն դու չըպիտի մոռանաս մեր մեծ մարգարէի հրամանը. դու պիտի աշխատես այդ անհաւատներին ուղիղ ճանապարհի բերել։ Կոտորելով վերջ չի լինիլ. այդ անպիտան շները միշտ պիտի ծուռ աչքով նայեն քեզ, քանի որ իրանց հաւատի մէջ կըմնան։

—Այդ ես գիտեմ. և միշտ աշխատում եմ, պատասխանեց խանը.—ես Տող գիւղի մեծ մասը մուսուլման շինեցի և հիմա տողըցիք մեր ծառաներն են։ Ղայբալի գիւղումն էլ սկսել եմ այդ գործը և յոյս ունիմ որ այնտեղ էլ շուտով կըշատանան մուսուլմանները։ Բայց շատ բան ես չեմ կարողանում անել, ես քիչ մարդ ունիմ։ Այս ձեր գործն է, իսկ դուք մինչև օրս ոչինչ չէք արել։

—Ալլահը քեզ կարողութիւն տայ, խան, ասաց մոլլա-Մուխտարը,—Դու եթէ ձեռք բարձրացնես, թուչկան թուչուններն էլ կըկանգնին. դու հրամայիր, մենք կանենք; մենք կըգնանք, ով որ խելքի չի գալ, չի ապրիլ։

—Ես վաղուց մտքումս դրած ունիմ այսպիսի մի

բան։ Մեր թուրք ժողովուրդը հանգիստ նստած է իր տեղը, բայց նա էլ պիտի ոտի կանգնէ։ Հիմա ամառն է և սարերում շատ թուրքեր կան. եթէ դրանց հասկացընենք մեր միտքը, շատ լաւ կըլինի. նրանք կըգան մեր ետեւից, մեր ոյժը կըշատանայ. զօռով թէ հաճութեամբ կըտարածենք մեր հաւատը հայերի մէջ։ Այդ շատ հեշտ բան է։ Պէտք է կոտորել դրանց քահանաներին, վարդապետներին և այն ժամանակ հայերը մենակ կըմնան, ա-կամայ մեր ասածը կանեն։

—Օրհնեա՛լ է Աստուած, ասաց մօլլա-Մուխտարը, ես էգուց ճանապարհ կընկնեմ, կըգնամ սարերը։

—Իսկ մեզ չէն վնասիլ, հարցրեց Մօլլա-Մէջիդը։

—Ես ձեզ երեսուն մարդ կըտամ, ասաց խանը։— Չէ, հիմա կարծում եմ որ այդ սատանայ Արզումանը խեղճացած կըլինի։ Աստծու մեծ ողորմութիւնն է, որ նրա հայրը մեր ձեռքն ընկաւ։ Մի քանի անգամ մարդ է ուղարկել մօտս, սպառնալիքներ է տւել թէ հօրս արձակիր։ Բայց ես ասել եմ թէ կարձակեմ միայն այն ժամանակ, երբ նա ինքը խելքի կըգայ կըհանդարտուի։ Ես ասել եմ, իմաց եմ տւել նրան, որ եթէ այսուհետև մի թուրքի ծառայ էլ սպանէ, ես նրա հօրը բերդի ճակատից կախ կըտամ։ Ուրեմն աւազակի թիւերը կապել ենք, պրծել։ Էլ ո՛վ է մնում նրանից յետոյ։ Դալի-Մահրասայի մասին պատմում են թէ գնացել է Գանձակ Մեժլումին բերելու։ Յիմարնե՛ր... նրանք դեռ ռուսներին են սպասում. կարծես ռուսները երկաթի մարդիկ են, չեն յոգնիլ։—

Ռուսնե՛ր . . . սաստիկ վախեցած բացագանչեց Մօլլա-Մուխտարը։—օ, մեծ մարգարէ, դրանք սոսկալի անհաւատներ են, աւելի պիղծ, քան հայերը։ Ո՛չ, խան, մենք պիտի շուտ վերջացնենք բանը, քանի որ այդ գազանները չեն եկել։ Թող գան և տեսնեն որ էլ իրանց կողմնակից մարդ չունենն։

—Շատ լաւ, թող օրհնուի Ալլահի կամքը, ասաց խանը։

Խորհուրդը վերջացաւ։ Խանն ուրախ էր։ Նա տեսնում էր որ հիմա գործը կըվերջանայ։ Մահմետական ժողովուրդը ոտի կըկանգնէ, կըսկսէ սարսափելի կռիւը։ Այդ կռւում կըոչնչանան թշնամիները, այդ կռիւը Դարաբաղի վերջին շունչը կըհանէ։

Մօլլաները խանի կեանքը օրհնելով հոլացան։

Զ.

Ցեխ-Ձոր . . . Սա մի մեծ, ահագին ձոր է Խաչէնագետի վրայ, Գանձասարի վանքի դիմաց։ Նրա միջով գնացողը երկինք չի տեսնում, ահագին ծառերը գլուխ գլխի տաճ՝ Աստծու լոյսը կտրում են, պահում, մըթնու սիրտ են ճաքացնում։ Լուռ է ահագին ձորը. վայրենի գազանն էլ, կարծես, վախում է այնտեղ մի ձայն հանել. միայն ծառերի տերևներն են խշշտում, երբ քամին նրանց իրար է քսում և միայն մի վոքրիկ ջուրն է վախվախելով, թփերի ու ծառերի մէջ կորած քչքչում, ինչ որ խուլ բաներ է ըլըլացնում, աւելի ևս մարդու սիրտ ահ ու դող քցում։

Մօլլա-Մուխտարը մի խումբ մարդկանց հետ գնում էր դէպի Ցեխ-Ձորը։ Նա հանդարտ կերպով բացատրում էր մարդկանցից մէկին, թէ ինչ է հաւատը մարդուս համար և ինչ բան է խլամը։

—Ո՛հ, ինչ վատ տեղ է, ընդհատեց նա իր քարոզը, երբ արդէն իջնում էին Ցեխ-Ձորը։

—Էհ, վատ տեղ է, ասաց Աստղը.—այստեղ անպակաս են մարդասպանութիւնները։

—Նզովք սատանային, հառաչեց մօլլան և պատուիրեց իր մարդկանց որ զգոյշ լինին և շուտ գնան։

Նա շտապում էր այդ օրը երեկոյեան անցնել Գան-

ձասալից դէն գոնուղ սարերը. բայց նա չէր նկատում— և ինչպէս կարող էր նկատել—որ լուռ ու մեծ ծմակի մէջ մարդիկ դէս ու դէն են վազում: Նա մտածում էր իր անելիքի մասին, մտածում էր թէ ինչ պիտի անէ Մօլա-Մէջիդը, որ ուրիշ կողմով էր գնացել, վերցնելով իր հետ խանի տաճ մարդկանց մեծ մասը:

Խումբը հասաւ ձորի խոր տեղը, գնում էր մի նեղ կածանով, որի երկու կողմը պատած էր ծառերի խիտ խմբերով:

—Մի շարժուիր, յանկարծ գոռաց մի ձայն ծառերի ետևից: Եւ միևնոյն ժամանակ մի քանի հրացանի ձայն լսեց:

Խումբը կանգ առաւ: Մարդ չէր երևում, առջևում գոնուղ թփերի և ծառերի ետևից հրացաններէն էին արձակում: Մօլա-Մուխտարը իր բոլոր մարդկանց առաջ ուղարկեց, ինքը մնաց ետքում, ապահով կանգնած: Մինչև իրան հասնելը աւազակները պիտի կտորէին բոլոր թուրքերին. իսկ այդ անկարելի էր համարում մօլան. նա վճռել էր յետ դառնալ, փախչիլ, եթէ աւազակները շատ զօր անեն: Իզուր էր նա հրամայում իր մարդկանց կռել, անցնել, իզուր էր խրախուսում, թէ մի վախէք, տղամարդ եղէք: Թուրքերն անշարժ կանգնած էին մըտածել, բղաւում էին, հարցնում, թէ ովքեր էք, դուրս եկէք ճանապարհը: Ծմակից ոչ ոք չէր պատասխանում, միայն երբեմն լսում էր հրացանի ձայնը. ծուխը ցոյց էր տալիս, որ աւազակները ծածկւած են ճանապարհի վրայ բուսած ծառերի ետևը և այդ պատճառով ոչ ոք չէր համարձակում առաջ գնալ.

—Եթէ այդպէս էք, հէնց հիմիկւանից յետ դառէք, գնանք, բարկացած ասաց Մօլա-Մուխտարը.—ես կըպատմեմ խանին . . .

Խօսքը նրա բերանում կիսատ մնաց: Երկու զօրեղ ձեռք նրան բռնեցին ետևից, ձիուց ցած քաշեցին: Յա-

վրշտակողը իսկոյն շալակեց նրան և վազեց անտառի խորքը։ Մօլլան մի այլ մի ազազակ արձակեց, օդնուէթիւն կանչեց։ Թուրքերն իսկոյն յետ դարձան, ձիաներից ցած իջան, այս ու այն կողմով մտան անտառը՝ իրանց մօլլային ազատելու համար։ Այդ շփոթութեանն էին սպասում ծառերի ետևում թագնուածները։ Նրանք դուրս թափուեցան դարաններից և սկսեց մի վոգբիկ կռիւ։ Աւազակներն աշխատում էին ողջ-ողջ բռնել թուրքերին և միայն նեղն ընկած ժամանակն էին սպանում։ Մօլլային փախցնողը, հասնելով ծմակի ամենաթանձր տեղը, ուր թփերն ու կարճահասակ ծառերը միմեանց սլինդ գրկած էին իրանց տակի հողը մթնացրած, ցած դրաւ իր բեռը, սլինդ կապեց նրա ոտներն ու ձեռքերը և հեռացաւ. նրա տեղը իսկոյն մի ուրիշ մարդ եկաւ, կանդնեց։

Այդ ժամանակ ծմակում շարունակւում էր կռիւը. աւազակները չէին լռում, երբեմն և հրացան էր արձակւում։ Մօլլային յափշտակողը վրայ յարձակւեց։ Նրա երկայն թուրը ճօճում էր ճիւղերի տակ, որ թուրքի ետևից հասնում էր, իսկոյն խլում էր նրա գէնքը և վայր դցում։ Շուտով աւազակները յաղթութեան ազազակ բարձրացրին։ Ամեն մի թուրք իր սեփական գօտով կապկապած գերի էր նրանց ձեռքին։ Մի երեք հոգի կարողացել էին փախչիլ, չորսը վիրաւորւած էին։ Բոլորին քշեցին այնտեղ, ուր մօլլան էր ընկած։

—Հաթիմ, Բաղդասարը վիրաւորւած ընկած է այն մեծ ծառի տակ, շո՛ւտ հասիր, տասց աւազակապետը և ինքը մօտեցաւ մօլլային.

—Հանիր շորերդ, ես քեզ սիրտ մորթեմ, գոռաց նա իր սուրը բարձրացնելով մօլլայի գլխին։ Նա ցածրից վեր նայեց, սիրտ մնաց, սկսեց դողդողալ։

—Նո՛ւա, անպիտան մօլլա, գոռաց նա։—Տվէք։ դուք էլ ձեր բանը տեսէք։

Տղէքն սկսեցին մերկացնել թուրքերին։

—Ինձ մի խալտառակիր, մարդ Աստծու, ասաց Մօլլան ցած ձայնով։

—Անօգուտ է աղաչանքդ, ես Աբգումանն եմ, Հայ. Նիր շորերդ։ Իմ կամքն այսպէս է, որ ես քեզ պէտք է մերկացնեմ, յետոյ կոտորեմ. մի վախիր, իմ սուրը բութ սուր չէ, ձեռքումս էլ ոյժ կայ, այնպէս կըկտրեմ քո գլուխը, որ ցաւ չես իմանալ։

Մօլլան Աբգումանի անունը լսելուց յետոյ յոյսը կըտրեց թէ պիտի ապրէ։ Եւ սկսեց աղաչել, պաղատել։

—Ինձ ներիր, խնդրում եմ, աղաչում եմ, ոտներդ եմ ընկնում։

—Չէ, շատ մի հաչիր, ես քեզ խղճող չեմ։

Միւս թուրքերն էլ սկսեցին աղաչանք, պաղատանք անել։

—Ելակւսին պահեցէք, մնացածը ձեզ, ասաց Աբգումանը։

Մօլլայի ականջին հասաւ իր մորթուող մարդկանց խռխռոցը և թուլացած գետնին ընկաւ։ Նա լսում էր թէ ինչպէս են մարդիկ հողը ճանկռտում և ինչպէս են մարթողները հայհոյում նրանց։ Իսկ Աբգումանը կանդնած էր մնացել, նայում էր և իր ընկերներին հրամաններ էր տալիս։

—Մեղաւոր եմ, քո առաջ ոչինչ եմ, անպիտան եմ, խղճայ ինձ, ասաց մօլլան։ Բայց Աբգումանն իր ոտը դրաւ նրա կրծքին. մօլլայի աչքերը մթնեցին, նա իմացաւ որ Աբգումանի սուրը մէկ էլ եթէ բարձրանայ, իր վրայ պիտի իջնէ։ Այդ վերջին րոպէին չանկարծ մի բան եկաւ մօլլայի միտքը և նա լայն բաց արաւ իր աչքերը, վիզը երկարացրեց բռնեց կրծքի վրայ սեղմած ոտը և ասաց.

—Ես հայրն այնտեղ է, Աբգուման, ինձ խղճայ, խանը նրան կըսպանէ։

—Բó, մինչև այժմ նա չի ապանեւել, Հարցըրեց Արշամանը զարմացած։

—Չէ, բայց կըսպանեմ, եթէ դու ինձ բաց չըթողես։

—Պահ, խօսք ասաց . . . Հինգ Սարգիս մեռնի, ես քեզ պէս չաղ պատառը ձեռքից չեմ տալ։ Թող սպանէ, նա իմ ինչ՞ս է Հարկաւոր, ծեր մարդ է։ Բայց դու այն առա՛, մօլլա, դո՞ւ ես եղել, որ ասել ես թէ պիտի Գանձասարի վանքը քանդեմ։

Մօլլան ուզեց խօսել, բայց չիմացաւ թէ ինչ ասէ։

—Սխալած եմ եղել, պատասխանեց նա.—էլ չեմ ասիլ։

—Իհարկէ, չես ասիլ։ Հիմա կըկատարե՞ս, ինչ որ ասեմ քեզ։

—Պատրաստ եմ։

Արշամանը նրան չոքացրեց, երեսը դէպի աղօթարանը դարձրեց։

Դու պիտի խաչատաշի պէս երեսիդ խաչ հանես և ասես, որ Յիսուս Աստուած է։

Մօլլայի կռնները թուլացան. նա գլուխը կախ արաւ.

—Շո՛ւտ, ահա քեզ ցոյց եմ տալիս թէ ինչպէս պիտի խաչ հանես։ Եթէ չանես, գլուխդ պիտի կտրեմ։

Մօլլան քիչ էլ գլուխը կախ արաւ և ապա ուղղեց, երեսին խաչ հանեց և ասաց.

—Յիսուս Աստուած է։

—Մէկ էլ ասա։

—Յիսուս Աստուած է։

—Մէկ էլ։

—Յիսուս Աստուած է։

—Դէ վեր կաց տեղիդ. ահա այդ երկու մարդը քոնն են. դրանք կենդանի մնացին։ Գնացէք ու ձեր խանին պատմեցէք։

Արշամանն իր ընկերների հետ հեռացաւ, տանելով իր հետ թուրքերից խլած ձիանները և զէնքերը։—

ԲԷՐԱՄ

(ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՑՑ)

(ՆԻՐՐ Ա. . . . Դ. . . . ՆԱՆԻ ՅԻՇԱՑԱՄՆ!

Ա.

Էնպ Քէլսի-խանը մեծ Թագաւոր էր. նա էր, որ չինեց Շերազը, անմահացրեց Հաֆիզին և Սադին, որոնց աւազները ս է ս երգեց, իսկ մեւսը՝ Ա ս ա ա ծ. քաջալերեց Հիւսէյն բանաստեղծին, որ բնութիւնը և բնութեան աւած դիւցազնները գովաբանեց, խանի գործերը և Շերազը անմահացրեց. նա էր, որ Շիրազին բանաստեղծական երկրի վոխեց, Իրանի և Թուրանի մուզայաստանը չինեց... Քէլսի-խանն էր որ 40 տարի Թագաւորեց իր ժողովրդի պաշտպանութեան համար, 40 տարի կռիւ մղեց չջջաստատ Թշնամի ցեղերի դէմ, մինչ յաղթեց և տանեց վայրենիներին՝ Թողնելու ուրիշի ունեցածով տալեալու վտանգը . . .

Ոչ մի Թագաւորի ժամանակ չէին ծնել այնքան քաջ և յանդուգն մարդիկ, այնքան երկնային գաղջը խօսքերը մեղրի պէս մեղ մատուցանող բանաստեղծները, այնքան վիէպլւանները

և սարքեւնեը, որքան ծնում էին քէչիմ-լանի Թագաւորու-Թեան ընթացքում։

Իրանը և Թուրանը այդ ժամանակ շատ Ուխտէմզալնեը ծնեց, շատ վէհվէհանները տեսաւ, շատ զօրապետներ Թշնամու վրայ սարսափ ձգեցին, շատ շայիք* գերեցիկը երգեցին, բայց ոչ մէկ փեհլևան, ոչ մէկ զօրապետ և շայիը չը Թողեց այն անմահ յիշատակը, ինչ որ Թողեց դյուլատալին Բէբամը . . .

Բէբամն եմ երգում, սիլ Իրանի և Թուրանի ժողովուրդ. Ձեր անմահ վիպերգն եմ երգում, իր արիւնով Ձեր հանգստու-Թիւնը գնող, Թշնամու զօրը ոչնչացնող Բէբամն եմ երգում . . . Թոյլ կաղմուածքով, բայց յանդուգն և յամառ գիւցազն եմ երգում, գիւցազն, որի կամքի ոյժը չեմ փոխել ոչ մի կոպիտ քաջութեան հետ . . .

Նա երբ, Բէբամը բնութիւնից քաջութիւն չէր տացել և ոչ Ուխտէմզալի պահպանող հրեշտակն ունէր նրան բարեկամ։ Մի գիւղացի կին նրան աշխարհ բերաւ, մի մօլլա նրա կաշին քերթելով Ղուրանն անգիր անել տւաւ, իր կոպիտ հայրը մահ բանել սովորեցրեց, իսկ իր ընկերը Ֆէրհաջն էր միայն, որ նրան սուր բանելու վարժեցրեց։

Իր գիւղն լեռներն և ձորերը եղան նրա առաջին աշխարհը, նժոյգների վրայ նստած սուր ու ձող չափչփելը եղաւ նրա հեծելազօրութիւնը և գեղեցիկ Ֆաթիման եղաւ պատճառ, որ Բէբամը Թողեց իր գիւղը և գնաց ընկաւ Բէբամ-լանի ահարկու գնդի մէջ։ Բէբամը Ֆաթիմային կորցրեց իր սիրոյ երկրորդ ամսումը. Թշնամի Բ ա խ տ ի ա ր ն ե ր ը **) մի օր վտանգին Ֆաթիմային և այլևս Բէբամը ոչ տեսաւ նրան և ոչ էլ լսեց նրա մասին։

---

* Բանաստեղծ երգիչներ։

** Մինչեւ այժմ գոյութիւն ունեցող մի վայրենի ցեղ է, որ բռնել է Արեւելեան Պարսկաստանի ամուր վայրերը։

Սիրտը դառնութեամբ լցուած Թոզեց նա գիւղը. Բախտախարներն դէմ վրէժով վառուած՝ մտաւ Շիրազ, Քէրիմ-խանի պալատը գնաց, ընկաւ Թագաւորի ոտքերը և աղաղակեց.

—Մեծդ Թագաւոր, Թոյլ տուր ինձ մտնել քո գնդից մէջ։ Թագաւորը նայեց Նրա նիհարը և Թոյլ կազմուածքին, ծիծաղեց և ասաց.

—Գնա կորիր, պատճառ «Փչեմ-ընկնես» . . . մի գնդիս մի պինդորը քեզ նման հարիւրին կուլ կըտայ . . .

Բայց որովհետև Բէրամը շատ ազաչեց. Քէրիմ-խանը վոտքը ինչ մատնոցից չեռոյ՝ ասաց Նորից.

—Պատճառ «Փչեմ-ընկնես», դու տեսիր ես մի Ռերուանի հսկայ վէհկաւանին . . . լաւ, ես քեզ կընդունեմ մի գնդիս մէջ, եթէ դու սկզբում կանես դուրս գալ Նրա դէմ . . .

Բէրամը համաձայնեց և Քէրիմ-խանը մուհեակիլ ձգեց Շիրազի փողոցները և ժողովրդին հրաւիրեց գալ մէյդանը հանդիսատես լինելու Բէրամ դիւզացու և խանի վէհկաւանի գոտեմարտութեանը։

Լցուեց մէյդանը խլխաննելով և հատարակ ժողովրդով, եկան այնտեղ վէհկաւաննեը և ղ օ ռ խ ա ն ա յ լ * աշակերտները, եկաւ և զօրքը և բոլորը ծիծաղում էին, տեսնելով Նիհար ազգակից Բէրամին, որ համարձակում էր ա ժ դ ա հ ա ** վէհկաւանի դէմն ելնել։

Խանի վէհկաւանը կիսամերկ, հսկայ քայլուածքով կըկէսը մտաւ և ծիծաղելով նայեց Բէրամին, որ հանդարտութեամբ շորերն էր հանում, սուտն էր Բէրամի դէմքը, անյողդողդ Նրա շարժուածքները և անչափ Նրա վստահութիւնը։

Այդ դարմացրեց ահագին վէհկաւանին.

---

*) Դա մի հիմնարկութիւն է, ուր վէհկաւանները անում են իրանց դպրոցը ժամանակակից կրթութիւնները. Պարսկաստանի ամեն քաղաքում կայ։

**) Ահարկու, վիշապանման, տկայ։

—Մ՛թէ այս խեղճը հաւատացած է, թէ կարող է ինձ յաղթել... մոռնաց նա և վախ զգաց, վախ զգաց այն վէհվլուանը, որ իր կեանքում հարիւր վէհվլուանի դէմ էր եղել, հարիւրի քէմն ու բերանը ջարդել և ոչ մի անգամ էլ վախ չէր զգացել։

Հնչեց վողը, ածեցին շեփորները և թմբուկները, Ներունի վէհվլուանը ըմբշի դիրք ստանալով, մի պատյտ դրծեց կրկէսի մէջ և մի կողմը կանգնելով, սպասեց Բէրամին։ Եւ վազեց Բէրամը դէպի նա անչափ և գրկեց նրան։ Երկու ըմբիշները վոգը ինչ կլսած մնացին լրտրու և այդ յանկարծ տեսան որ Բէրամը գանւում է վէհվլուանի բարձրացրած ձեռքերի վրայ, ձեռքեր, որոնք չարժւեցան և Բէրամը գնաց քէմ ու բերանը ջարդելու տասը քայլ հեռւում գանւող քարակոյտերի վրայ... Բարձրացաւ մի ընդհանուր ծիծաղ. Ներունի վէհվլուանը ժպտեց և ասաց լնքնիրան։

—Եւ ես չեմարա վախենում էլ այս տղայից...

Ասաց, երկու քայլ արաւ և պատրաստւեց կրկէսից դուրս գնալու. բայց յանկարծ վախեցած ետ ետ քաշւեց։ Բէրամը, գլուխը ջարդւած, քէմ-բերանը արիւնոտ Բէրամը գալիս էր դէպի նա և ազաղակում։

—Սպասիր, դեռ ևս չեմ յաղթւել...

Նա երերում էր, արիւնը նրա գլխից և դէմքից աղբիւրի պէս վազելով ծածկում էր շորերը և ներկում դէմքը, բայց նա գալիս էր, բռունցքը սեղմած, գալիս էր ուղղակի...

Այս անգամ Ներունի վէհվլուանը լրտւածը վախ զգաց, չեաոչ նաշնաց Բէրամին, ուսաի և մխաքը դրեց նրան ձգելու չաշնատել, այլ միայն պաշտպանելու։ Եկաւ Բէրամը, նորից գրկեց վէհվլուանի հասա մէջքը, նորից իր արիւնոտ գլուխը կռթնեցրեց նրա լայն կուրծքին և այնպէս ցնցեց վէհվլուանին որ սա մոռանալով Բէրամին նաշնալու մտադրութիւնը, երկրորդ անգամ բարձրացրեց նրան և այնպէս շպրտեց դէպի հեռու, որ խեղճ երիտասարդն ընկաւ, ձախ թևը կոտրեց և ուշաթափւեց...

—Այս անգամ վերջացաւ, գոչեց ժողովուրդը։

—Ի՞նչ յամառն է, բացագանչեցին փէհլեւաննները։

Բէրամի լանը ծիծաղեց ընկած Բէրամի վրայ, իսկ ծերուկի փէհլեւանը մօտեցաւ, նը չորեքին և սկսեց հագնիլ . . . Ըմբշամարտութիւնը վերջացած համարւեց և Բէրամ-լանը վեր կացաւ գնալու . . .

Յանկարծ ընկած Բէրամը ուշքի եկաւ, բարձրացաւ, դողդոջուն քայլերով, հրեց ամբոխը, մօտեցաւ հագնող փէհլեւանին և որչափ ոյժ ունէր՝ գոռաց.

—Սպասիր, դեռ ես չեմ յաղթւել . . .

Բոլորը կանգ առին, ապշութիւնը կատարեալ էր. ծերուն փէհլեւանը հեռացած եա քաշւեց և բացագանչեց.

—Բայց էլ ոչ տեղդ չի մնացել, անմիտ.

—Այ Թէս դեռ ոչ է, ժպտեց Բէրամը և յառաջացաւ դէպի Նա։

Փէհլեւանը յուզւեց, Նա մի տեսակ սարսափով Նայեց այդ Թոյլ կազմւածքով ուժեղ կամքի վրայ և վոքր ինչ մտածելուց յետոյ՝ դարձաւ դէպի Բէրամ-լանը և ասաց.

—Ո՛չ, լանն ապրած կենայ, ես հրաժարւում եմ սրա հետ կռւելուց . . .

—Կռւենք, աղաղակեց Բէրամը — դեռ դու չես յաղթել, իսկ ես պիտի յաղթեմ քեզ . . .

—Կռւեցէք, ասաց Բէրամ-լանը ժպտելով։

—Ո՛չ, կրկնեց փէհլեւանը մօտենալով Թագաւորին—այս տղան հազւագիւտ մի տղայ է, սրա յանդգնութիւնը և յամառութիւնը, սրա կամքի երկաթէ ոյժը աւելի մեծ գործեր կարող են տեսնել, քան Թէ նա և քո շատ քաջ զօրապետները։ քաջութիւնները , . . լանն, *յանդգնութիւնը եւ յամառութիւնը հաւասար են մի ամբողջ քաջութեան*... Այնուամենայնիւ այս տղան, պահը սրան քո գնդում մէջ և սա է, որին շալիքները սպասում սիրտ նեիրեն երկնային գրիչները . . .

Բէրամ-լանը լսեց նրան և այսպէս Բէրամը մտաւ Բէրամ-

խանի գնդի մէջ, բայց այնքան Թոյլ էր նա, այնքան նիհար, որ նրա անունը մնաց «Փչեմ ընկնիս»...

Ո՛վ Իրանի և Թուրանի ժողովուրդ, այս մի՛ևնոյն «Փչեմ-ընկնիսն» էր, որն ազատեց հայրենիքը իր սուրը արևնով և դրա մէջ գտաւ իր վարձատրութիւնը...

Բ.

Այս մի՛ջոցներում էր, որ Սպահանի Բախտիարները կատաղել էին և Քէրիմ-խանի երկրի սահմանները տաքի տակ առած այրում, ջարդում, քանդում ու ամէն տեսակ բարբարոսութիւններ անում էին... Աստուած երէկ ուղենար մի մեղաւոր ժողովրդի պատուհասել, չէր կարող այդքան անգթութիւններ անել, այդչափ արիւն Թափել, որքան անում և Թափում էին Բախտիարները... ժողովուրդը Թողած իր հողը, տունն ու տեղը՝ վախչում-ցրւում էին դէպի լեռները, իսկ Թշնամին վերցրելով ամէն ինչ, աւերելով գիւղերը, վառելով դաշտերը, արիւնով կարմրցնելով մեր երկրի սուրբ հողերը՝ խումբ առ խումբ մօտենում էին Շիրազին։

Քէրիմ-խանին հասաւ գուժկանը. խանը հաւաքեց իր զօրքը և Թշնամու դէմ գնաց, բայց հէնց առաջին ճակատամարտում յաղթուեց նա և հազիւ 500 հետևորների հետ ետ վախչելով՝ ամրացաւ Բուշհ ամրոցի մէջ, լուր ուղարկելով Շիրազ օգնական զօրք գալու համար։

Բախտիարները այդ յաղթութիւնը տանելուց յետոյ հաւաքուեցին, իրանցից մէկին ընտրեցին զօրավար և կանոնաւոր կերպով սկսեցին յառաջանալ դէպի Բուշհ, ճանճանելով իրանց սպիտակ դրօշակը, որի վրայ նկարուած էր մի գայլուսած ահեղ վիշապ։

Քէրիմ-խանի դրութիւնն անասնելի էր. օգնական զօրքը չէր հասնում. Թէև բերդն անմատչելի էր և պարսը շատ կար, բայց Քէրիմ խանը կատաղութիւնից իրան կորցուած էր, երբ

ամբողջ բարձրաձիենից տեսնում էր ժողովրդի լցած տանջանքը բարբարոս Բախտիարների ձեռքից։

Մի գիշեր նա տեսաւ Լէխ լինչպէս Բախտիարները մի գիւղ վառել, կրակի վրայ խորովում էին գիւղացիներին, որոնց գլուխները ցցած էրանց երկար նիզակների վրայ, այնպէսկ պար էին կազմել վառուող գիւղի շուրջը և գիւղացոց սրհատական ազաղակները խլացնել չէին կարողանում նրանց խռպոտ օռնոցներով . . .

Նրա սրտինը եռ եկաւ, նա դարձաւ իրեն չրջապատող զօրապետներին և գինուորներին ու ասաց.

—Մի՛թէ չկան ձեր մէջ մարդիկ, որ ազատեն հայրենիքը այդ բարբարոսների ձեռքից . . .

Ամենքը լռեցին, ոչ ոք չէր համարձակում իջնել 1000-ից աւելի կառաւղ խուժանի դէմ . . .

—Է՛հ, գոչեց այն ժամանակ խանը—ուրեմն Լեռ կործանելի այն ազգը, որ իր հայրենիքը գերութիւնից ազատելու սիրտ ունեցող որդիք չունի . . .

Եւ հեռանալացաւ Բէրլիմ խանը, գրից իր կառքը ու կամենում էր մեռնել, բայց մի՞ւս օրը Բէրամը խնդրեց խանին տեսնել. եկաւ ընկաւ Լեռագնացորի ոտքը և աղաղակեց.

—Թագաւորը ողջ կենայ, մեզ հրաման տուր դուրս գնալ կռուելու այդ բարբարոսների դէմ. մենք հարիւր հոգի ենք, մեռնելու պատրաստ մարդիկ, իսկ գլխաւորները ես և իմ ընկերը Ֆէրրաջն ենք։

Բէրլիմ խանը ծիծաղեց։

—Կորչիր, ասաց,—իմ վէհլևաններս վախենում են մեռնելուց, դո՞ւ ուր մնացիր, պարոն „Փչեմ—ընկնիս“։—Ոչ երբէք, ասաց Բէրամը,—խանը Լեռ չիշէ, որ ես „Փչեմ—ընկնիս“ եմ, երբ կամենամ. իսկ մինչև այժմ պետ չեմ կամեցել, մանաւանդ այժմ բոլորովին չեմ կամենում . . .

Այնքան ամուր ձայնով և խրոխտաբերեամբ ասաց նա այս խօսքերը, որ Բէրլիմ-խանի մէջ ծագեց մի վոքրիկ յոյս և նա ասաց.

—Դնացէք, եթէ ոչինչ չէք անիլ, գոնէ կռւելով կրմեւնէք . . . Բէլամն ու Ֆէլըմաջը ընկան հարիւը գինւորների առջև և մեծով բերդից այնպէս դուրս գնացին դէպի դաշտը, որ Թշնամին չը նկատեց նրանց . . .

Սոպալով և դաշոյնները բերանները առած, մի ձեռքում նիզակ, Թևի վրայ նետերի կապարճն ու ուղեղը, նրանք խոտերի միջից մտեցան Թշնամու բանակին և աշխատեցին ննչքան կարելի է չընկնել լրակի լոյսով լուսաւորւած մասի մէջ։

Բախտաբերները խումբ առ խումբ նստել էին լրակի լուսաւորւած մասերի մէջ, վրաս էին եկել՝ գիպի ոչխարները մորթոտել, նորոված էին անում, իսկ նրանց չորջը ընկել էին կոտրած գլուխները, ոտները, աղիքները դուրս թափած դիակները, սրերի կապած մերկանդամ կանայք, խորոված և սէւացած կանանց մարմնի մասեր, յոշոտած մանուկներ և նիզակների վրայ ցցած մօլլաների մօրուքաւոր գլուխները ու գըլխեվայը այդտղ լրակի խարոյկի մէջ կրնամեռ ծիրանիները . . . Լաց, կօծ, հառաչ, օռնոցներ խառնուում էին Բախտիարների խանդաղ երգերին . . . և արիւնոտ էին նրանք և նրանց նիզակները, արիւն էր կաթում, դաշոյն խոտը կարմրել էր ու արեան լճակների մէջ նմանում էր Վլադին ու Մատնւորանի Հաղթներին . . .

Գիշերն աները քարուքանդ, կամ նոր վրան, կամ արդէն մոխիր դառել և կամ հեռուհեռուկ կործանուում էին. իսկ նրանցից երբեմն դէպի օդը սլացող վառուած տախտակները գալիս, ժժալով ընկնում էին արիւնի լճակների մէջ և պատճառ դառնում վայրենիների արձակած ուրախ օռնոցներին . . .

Բէլամը և Ֆէլըմաջն իրենց ընկերների հետ թաքնուած խոտերի մէջ, այդ բոլորը տեսնում էին. նրանց աչքերը կատաղութիւնից վայրում, շրթունքները դողում և արիւնը եռ էր գալիս . . . վոքը մի ևս՝ Ֆէլըմաջն անպատճառ կրնետէր Թշնամու վրայ, եթէ Բէլամը չբռնէր նրա Թևից և չը մեմռատր։

— Սպասիր, դեռ ժամանակը չէ . . .

Երբ վրաը մեծ-մեծ ամաններով և խորովածը չամբուլներով զբաղեց Բախտիարների առաջ, երբ սրանք իրանց արիւնոտ ձեռներով մօտեցան կեցակուբներին, Բէյրամը նշան տուաւ իր զօրքին ետ քաշուելու և երբ նրանք հասել էին ամրոցի սահրոտը, Բէյրամը բաժանեց զօրքին մաս առ մաս և հրամայեց սոզալով մօտ գնալ Թշնամու խմբերին և սպասել յարձակման նշանին։

Վրանից յետոյ նրանք նորից սրերն ատամներով բռնած մօտեցան Թշնամուն և սպասեցին։

Գիշերը մութն էր, երկինքն աւելի մթնանում էր դէպի նա բարձրացող Թանձր ծուխից. կրակը բաւական տեղ սրփռում էր իր լոյսը, փչում էր մի զովարար քամի և ամբողջ կրակն ոգեշնչում . . . Ճայթում էին տախտակները, օդն էին սլանում վառուած փայտերը, ազաղակում էին մեռնողները և օգնում էր Թշնամին . . .

Յանկարծ լսեց մի սուլոց, նրան հետևեց ամեն կողմից կատազի աղաղակները և Բէյրամի զօրքն ուժգնութեամբ ընկաւ Թշնամու վրայ. սկսեց կոտորած։ Բախտիարները վազեցին իրենց պէնքերին, բայց խառնեցին միմեանց և կարծելով թէ Թշնամին չատ էր, շփոթեցին ու սկսեցին միմեանց կոտորել։ Կռիւը շատ չըտևեց, որովհետև Բախտիարներն սկսեցին փախչել և քիչ յետոյ սպատերազմի դաշտում մնացել էին Բէյրամի զօրքերից 10—15 հոգի, իսկ գետնի վրայ փռուած կային երեք Թշնամու դիակի մօտ մի մեռնողի դիակ . . . Յաղթութիւնը Բէյրամինն էր . . .

Ամրոցի վերից Բէյրամ-խանի զօրքը նկատեց այդ. Բէյրամխանը վեր թռաւ անկողնից, ձի հեծաւ և իր մնացած զօրքոմն շտապեց կռւի դաշտն իջնել . . .

Վազեց նա, ցնծաց նրա հոգին և նա Բէյրամին վճռեց, Բէյրամին, որ հայրենիքն ազատեց։

Բայց Բէյրամը վիրաւորուած էր և վիրաւորուած բազմաթիւ

տեղերից, Նրա մարմնի ամեն կողմում ցցուած կային նետեր, ամեն ուղղութեամբ տեսնուում էին սրի լայն վէրքեր և արիւնը լիովին ծածկել էր նրա գեղեցիկ դէմքը, նրան գտան մի արիւնի լճի մէջ ընկած, իսկ նրա կողքի վրայ փռուած էր Թշնամու դրօշը . . . բոլորը շրջապատեցին վիրաւորին. Բէրամը երբ տեսաւ Քէրիմ-խանին, բարձրացաւ, յեցաւ իր բարեկամի թևերի վրայ, մի գոհ ակնարկ ձգեց իր չորս կողմը, ժպտեց և դառնալով խանին՝ շշնջեց.

—Յաղթութիւնը մերն է . . .

Քէրիմ-խանը յուզուած վազեց դէպի նա, գրկեց նրա արիւնոտ գլուխը, համբուրեց վիրաւոր ճակատը և գոչեց.

—Դու դիւցազն ես, ես չգիտեմ ինչով վարձատրեմ քեզ, որովհետև քո արածը մեծ է քան աշխարհիս բոլոր վարձատրութիւնները . . . ասա, ինչ վարձատրութիւն կարող է փոխարինել . . .

Բէրամը ժպտեց, ձեռքը տարաւ իր տակի դրօշակին, որի վրայի վիշապն անտեսանելի էր եղել նրա արիւնից, քաշեց, դուրս հանեց, բռնելով նրա կոթից, հաւաքեց վերջին ոյժը, պարզեց դրօշը դէպի խանը և ասաց.

—*Այս վարձատրութիւնը քի՞չ է . . .*

Եւ մի աճգամ ևս ընկած դիակներին նայեց ու շունչը փչեց.

Քէրիմ-խանը շատ արտասուեց նրա վրայ, արտասուեց ամբողջ զօրքը, արտասուեց Իրանը և Թուրանը, իսկ չալիքները Թաղթախեցին իրանց գրիչները արտասուքի մէջ և ողբացին նրան . . .

Եւ Թաղեցին Բահրամին Շիրազում. նրա շիրիմի վրայ ցցեցին Թշնամու դրօշը, որ Ներկուել էր դեւցազնի արիւնով և Քէրիմ-խանը այդ դրօշի վրայ գրել տուաւ սոյն տողերը . . .

Սպիտակ էր . . . վիշապ ունէր իր վրայ. Բէրամը կարմիրացրեց իր արիւնով, ջնջեց վիշապը . . . եւ իր վարձատրութիւնը միայն նրա մէջ տեսաւ . . .

Մեռաւ Բէրամը, բայց չմեռաւ Նրա անունը. շայիրները երգեցին Նրան, անմահացրին Նրա գործը. իսկ Նրա դրօշը մի րոպէ երեսից ուսերին կրելու պատուից մեծ պատիւ չէր Ճանաչում պարսիկ փէհլևանը։ . .

Մինչև այժմ էլ, երբ պարսիկ ժողովուրդը երկու փէհլևաններն գաւեմարտութեան է հրաւիրում, երբ մէկ ուժգնահան մեսին գլորում է, երբ ընծայ ժողովրդից կամ նշանաններից ոչ թէ փող կամ պատատ, աստիճան կամ հեռևիէրն է կամենում ստանալ . . . ոչ, այդ բոլորն էնչ արժէն այն պարզ ձողն առջև, որ ահա ցցած կենում է կրկէսի ծայրում, փողփողում է իր վրայն ոսկեթել եզերքով կարմիր Թաշկինակը։ Անմահ Բէրամի արիւնով ներկած Թշնամու դրօշակն չէ՞ատակն է նա և կոչւում է բէրամ (բահրամ) . . . Փէհլևանը ոչ մի պատատի, ոչ մի գանձի, ոչ մի աստիճանի կամ հեռի փէրիի հասնել չի կամենում, եթէ չի կարող բէրամը ձեռն առնել, դնել ուսի վրայ, պարծանքով փողոցները մտն գալ և երգել անմահ շայիր Հիւսէյնի խօսքերը

„Արիւնով գնեցի Թշնամու այս դրօշը,
Աշխատրէի հետ չեմ փոխել կարմիր շորի այս կտորը...

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ *

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ.

Երկրիս երեսին եղած նշանաւոր տեղերի անուննները, ինչպէս՝ սարերի, լերանց, հովիտների, ձորերի, դաշտերի, ծովերի, լճերի, գետերի, վտակների, առուների, աղբիւրների, կղզիների, երկիրների, քաղաքների, գիւղերի, ճանապարհների և ուրիշ սրանց նման տեղերի անուննները աշխարհագրական անուններ։

Աշխարհագրական քարտէզների վրայ եղած բոլոր անուննները զուտ աշխարհագրական անուններ են, և բոլոր լեզուների համար էլ մի և նոյն անուններն են։ Այսպէս՝ մեր Արարատը, Արաքսը, Էջմիածինը, Երևանը, Անին, Կարսը, և բոլոր միւս տեղերի անուննները միևնոյն են ամեն լեզուներում և ամեն քարտէզներում։

Եթէ լաւ ուշադրութիւն դարձնենք մեր երկրի աշխարհագրական անունների վրայ, հետաքրքիր լինինք իմանալու նրանց ծագումը, նշանակութիւնը, մի բոլորովին հին աշխարհ կբացուի մեր մտքի առջև, այսինքն՝ ժամանակով մեզանից այնքան հեռու, որին մեր միտքը չի կարող հասնել։ Օրինակ. մենք հիմա չգիտենք մեր երկրի աշխարհագրական անուններից շատերի նշանակութիւնը, գիտենք, որ Մասիսը սարի անուն է, Արագածը՝ նոյնպէս։ գիտենք, որ Արաքսը գետի անուն է, Երևանը՝ քաղաքի,

* Շարունակութիւնը նախորդից համարում։

Շիրակը՝ գաւառի, Գուգարքը՝ նահանգի, ինչպէս և Տայքը, Սիւնքը, Վասպուրականը, Տարօնը, և այլն, բայց այդ անուանների նշանակութիւնը մեզ անհասկանալի է։ Եթէ մի տար, մի գետ, մի քաղաք կամ լերդ Հայաստանումն է գտնուում, դրանից կարելի չէ եզրակացնել, որ նրա անունն էլ, ինչ էլ որ լինի, հայերէն պիտի լինի։ Մի երկրում մէյն մէկ ազգ և մէկ լեզու չի բնակուում, այլ շատ ազգեր և լեզուներ։ Ամեն երկիր հազարապատիկ աւելի հին է, քան թէ նրա վրայ բնակող ազգերը։ Ով գիտէ, թէ ներկայումս գոյութիւն ունեցող ազգերից առաջ էլի քանի՛ քանի ազգեր են եղել նրանց այժմեան տեղը բնակած, դարերով ապրած, իրանք անյայտացած, բայց իրանց լեզուով զանազան աշխարհագրական անուններ թողած։

Մեր ազգութեան սկիզբը մեզ յայտնի չէ։ Այս ցոյց է տալիս, որ մի շատ և շատ հին ազգ ենք, բայց մեր երկիրը՝ Հայաստանը՝ մեզանից հազարապատիկ հին է։ Երբ որ Հայք տիրել են Արարատեան երկրին, այդ երկիրն անմարդաբնակ չի եղել, այնտեղ ապրելիս են եղել ուրիշ ազգեր։ Պատմական ժամանակներից մեզ արդէն յայտնի է, որ Հայաստանումը բնակում էին՝ իբրև հայոց հպատակ ժողովուրդներ՝ քաղդէացիք, ասօրիք, հրեայք, մարք, պարսիկ, յունական ցեղեր, վրացիք և ուրիշ լեռնականներ։ Ի՞նչ ասել կուզի, որ դրանք ամենքն էլ գիւղերը և քաղաքները կուևենային, իսկ նրանց անուններըը ամեն ազգ իր լեզուով կըտար, ինչպէս և իրանց գաւառի և նրանում եղած սարերի, գետերի և այլ տեղերի անուններըը։ Նոյն իսկ *քաղաք* բառը, որ վրացերէն էլ ասւում է *քաղաքի*, չիգիտենք, արդեօք հայերէն է դա, թէ վրացերէն, որովհետև կարող է պատահել, որ ոչ հայերէն լինի և ոչ վրացերէն և ոչ էլ այժմեան նշանակութիւնը լինի ունեցած հնումը։ Աւելի հաւանական է, որ հայք դեռ հով-

ւական կեանք լինէին վարելիս, թափառական և վրանաբնակ լինէին, իսկ ուրիշ ազգեր այնքան քաղաքակրթուած լինէին, որ ունենային քաղաք, բերդ, բուրգ, աւան կամ վան, և Հայերն էլ նրանցից փոխ առած լինին այդ անունները։

Գիւղերը, քաղաքները և բերդերը շատ անգամ կրում են իրանց շինողի անունը, կամ այն իշխանի և թագաւորի անունը, որի օրով որ շինուած է։ Եթէ, օրինակ, Երուանդ անունով մի իշխան կամ թագաւոր, շինէր մի քաղաք, մի բերդ կամ աւան, նրա անունով նոյն շէնքերը կոսէին, Երուանդաշէն, Երուանդակերտ, Երուանդաշատ, Երուանդաւան, Երուանդավան։ Երուանդ անունին կպած շէն, կերտ, ւան և վան մասնիկները, որոնք եթէ Հայերէն են և թէ պարսկերէն, բոլորն էլ նոյն են տալիս շինած։ Այսպիսի անուններ են—Վաղարշապատ, Արտաշատ, Արշակաւան, Խոսրովակերտ, Տիգրանակերտ, Վարդաշէն։ Շատ անգամ գիւղերը շինում են որ և է սարի, հովտի, աղբիւրի, տեղի և այլ տեղի կամ բանի անուն ունեցող տեղերում և նոյն անունովն էլ կոչում են. ինչպէս՝ Վարդաբլուր, Արտջոր, Քարագլուխ, Ծաղկոցաձոր, Սև քար, Հաչոջուր, Բիւրական, Աշտարակ, Աղահանք, Երկաթաջուր, Կաթնաղբիւր, Երկայնհովիտ, Քարտանատրա, Խազարոյն, Վարազաբոյն, Աւետարանոց, Կօթիգեղ, Հունոտ, Հայկք, Խնձորիք, Ուռուտ, Այգեհատ։

Երկիրների անունների վերջից՝ առաջ կպցնում էինք ստան, իսկ հիմա աւելցնում ենք նաև իա և ա, ինչպէս՝ Հայաստան Վրաստան, Լեռնաստան, Պարսկաստան, Մարաստան, Ասորեստան, Հնդկաստան, Չինաստան, Թուրքաստան, Հրեաստան, Յունաստան, Ռուսաստան. և՝ Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Գերմանիա, Աւստրիա, Ասիա, Աֆրիկա, Եւրոպա, Ամերիկա, Աւստրալիա, Ռուսիա, Թիւրքիա, Արմենիա, Բուխարա, Նապօնիա, և այլն։

Ստան՝ նշանակում է *շատ*, ինչպէս այգեստան, տափաստան, լեռնաստան, այսինքն՝ այգեշատ, տափաշատ, լեռնաշատ։ Շատ անգամ փոխանակ ստան մասնիկի մի *ք* են աւելացնում, ինչպէս՝ Դուգարք, Տայք, Սիւնիք, Աղուանք, Տաշիրք, Բաղք, Ալանք, Ասորիք, Մեծ Հայք, Փոքր Հայք։ Տեղերի անունների վերջից աւելացած *հի* և *իա* մասնիկները, որ վրացերէն են, նոյնպէս *ստան* են նշանակում։ Ստում են Սոմխէթ, Ռուսէթ, Իմէրէթ, Օրբէթ, Օփրէթ, Սամցրէթ, Դուշէթ, Թօնէթ, Բօլնիս, Դումանիս, Մանդլիս, Քութայիս, Թիֆլիս Շինդիս, Կրճանիս, Գօրիս, Ագուլիս, Ալարակունիս։

Հայերն իրանց անձնական անունների պէս փոխել են և իրանց աշխարհագրական անունները։ Շատ հայաշէն և հայաբնակ գիւղ՝ներ ներկայումս ընկել են աշխարհագրի մէջ իրանց թուրքացրած անուններով։ Այդպիսիք են—Աղ-Քիլիսա, Ղարա-Քիլիսա, Դաշ-Բուլաղ, Ղըրխ-Բուլաղ, Աղ-Բուլաղ, Շիշ-Թափա, Գիւլ-Թափա, Համամլու, Ղամարլու, Ուզունլար, Քեաւթառլու, Քեափանագ, Ուզունթալա, Աղ-դամ, Գեօղ-չայ, . . . Ալագեազ, Արփաչայ, Շեօրագեալ, Ղարա-Բաղ, Ղարա-Քաղ, Ղարա-Խաչ, եւայլն։

Զընայած հայոց այս պակասութեանը, ոչ մի աղգ չկայ Անդր-Կովկասում, որ հայոց պէս աշխարհաշէն և քաղաքաշէն լինի։ Հազար տարուց աւելի է, ինչ որ թուրքը, թաթարները սաք են գրել Անդր-Կովկասում և Հայաստանում, անթիւ քաղաքներ և գիւղեր են աւերել, կործանել, բայց ոչ մի քաղաք չեն շէնացրել, ոչ մի նոր քաղաք չեն հիմնել։ Հայերը ոչ միայն իրանց բնիկ երկրում, այլ ուր էլ որ գաղթել են, բազմաթիւ գիւղեր և քաղաքներ են շինել։ Վրաստանի բոլոր քաղաքները հայերի շէնացրածներն են, ինչպէս Թիֆլիս, Սղնախ, Թէլաւ, Գօրի, Ախալցխա, Ախալքալաք, Ալէք-

սանդրապոլ, Նոր-Բայազէդ (Երևանի նահանգում)։ Եթէ անցել են Ռուսաստան, այնտեղ էլ են շէնացրել քաղաքները—ինչպէս Ղզլար, Մոզդօք, Ալմաւիր, Նոր-Նախիչևան իր եօթը զիւղերով, Սուրբ-Խաչ, Ղարասու-Բազար, Թէոդոսիա, Դրիգորուպոլ։ Հիմա էլ Բագու, Բաթում, Աբդահան, Կարս, զեկեցկացնողը, շէնացնողը Հայերն են և ոչ իրանց միւս դրացիները, (բացի ռուսներից, ի հարկէ)։ Հայոց այս յատկութիւնը արժանի է խորին ուշադրութեան և համակրութեան, որովհետև ցոյց է տալիս, որ Հայերը շինող են և ոչ քանդող, թուրքերի և թաթարների պէս ձրիակեր և յափշտակող չեն, այլ՝ աշխատասէր, արհեստասէր, երկրագործ և արդիւնաբերող։ Եթէ Հայերն իրանց բնիկ երկրում—Տաճկա-Հայաստանում, բարբարոս քուրդերից և այլ վայրենի ցեղերից չկողոպտւին, չկնդեքւին, իրանց աշխարհը դրախտ կը դարձնեն, ինչպէս որ եղել է մի ժամանակ, երբ, ինչպէս վկայում են պատմիչները և այժմեայն բազմաթիւ հրաշակերտների աւերակները, ոչ մի կանդուն անմշակ հող չի եղել։

Գ. ԱՂԱՑԵԱՆՑ



ՆՈՐԱԼՈՒԾ

Նորագոյն գործնական հրացանը։

Առանց վատօդի հրացանի մասին զեղմանութիւն լսագրոյ մը Փարիզի թղթակիցը կը գրէ. „Հոս պատմեցիքս քանդագուշանք կամ արուեստանանդէսին վերջին գիշերը կարկատուած առասպել մը չէ, այլ աչօքս տեսած եւ աչացս առջեւ փորձուած գիւտ մը։ Ի մի քան՝ այս զարմանալիին անվատօդ հրացանն է. Giffard այն հրացանին գոիչն, այս առաւօտ ինծի ցուցուց եւ աչացս առջեւ փորձեց։ Ժիփար, որուն գիւտերուն մէջէն՝ ուսուիչը պահելու օդով մխրճման եւ Բարիզեան օդամուղ սուրհանդակին ամենաանհաւատալին են, իւր քազմամեայ ուսումնասիրութեամբ ու փորձով գտած է հրացէն մը, որ ծնշեալ եւ հեղուկացեալ օդով սկզբան վրայ հատատուած է։ Այն սրահին մէջ ուր Ժիփար իւր նոր հրացէնն ինծի ցուցուց, ամենեւին հրացան արձակելու տեղ չկար, եւ ոչ իսկ ապահովութիւն, թէեւ արդէն Ժիփարի անունն իւր գիւտերուն շնորհիւը մեծ համբաւ առացած է, սակայն ես չհաւատալով կը սպասէի, երբ Ժիփար արդի հրացինուց նման հրացան մը ցուցնելով ապահովացուց՝ թէ պիտի կարենայ նոյնով անդիմադրելի 300 անգամ գնդակ արձակել։ Այս հրացէնը շատ թեթեւ է, նոյն իսկ քանակաց մէջ գոծածուող այժմեան հրացանիներէն աւելի։ Հրացանին վրայ 18 թիզ երկայն եւ բ֊ամմուտի հաստութեամբ պողպատեայ փամփուշտ մը հատատուած է։ Այս փամփուշտը 300 լիցք կը պարունակէ, որոնք քան հաճոյից հանելէ, եւս կրնան արձակուիլ, եւ այն՝ առանց կրակի։ Վասն զի ոչ վատօդն, եւ ոչ ուրիշ որ եւ իցէ պայթուցիչ քան մը, այլ հրացաններու վրայ հատատուած՝ օդը ծնշելու եւ հեղուկ դարձնելու միքենայն կը մէջ եւ ի՛արձակէ գնդակը, որով ոչ ծուխ եւ ոչ քոց յառաջ կուգայ, այլ միայն շառաչմամբ շշուկ մը հրացանէն կրակ առնուլն կ՚իմացըներ։ Գնդակը մեծ ճշդութեամբ նշան առնուած տեղը՝ սրահի պատին մէջ խորունկ մուտ եւ յետոյ յետս ցոլացաւ։ Եթէ փամփուշտին 300 լիցքերն ալ արձակուին, սէկտ է ուրիշ փամփուշտ մը հրացէնին վրայ պտուտակով հատատուել։ Ժիփար կը հատատուէ թէ փամփուշտին 300 լիցքերն 10 ամսդիմով կրնան հաթայֆութիւ։ Ծուխ ու քոց չունենալէն զատ հրով գրեթէ երկու հազար մեղր պացող գնդակներու աւերիչ ազդեցութիւնը քոլորովին անտեսանելի եւ գրեթէ անլսելի կ՚ըլլայ), Ժիփարին գիւտը հետեւեալ առաւելութիւններն ունի՝ ինչպէս ինքը ըսաւ։ Հարուածն անվրէպ նշան առնուած տեղւոյն կը հանդիպի, վասնզի հարուածն քան կամն կը թռչայ կամնատարուիլ. հրացանն ամենևին ցնոս միտմ՚ չունի եւ մէկ ձեռքով կրնայ արձակուիլ։ Լեցնելու ժամանակ համդիպող սովորական ձախորդութիւններ է քոլորովին ազատ է։ Հրացանափողն երբեք չի տաքնար նոյն իսկ 300 լիցքը արձակելէ հետոյ ալ. փամփուշտներն, որ 300 հարուած յառաջ քերելու ծորելի եղած կապը կը քովանդակեն, թեթեւ են եւ մեծ քանակութեամբ դիւրաւ կրնան տարուիլ. եւ հրացանի ալ՚ իրենք ալ օդով անհատութեան եւ փոխոխութեան կրնան դիմանալ։ Հրացանն ամէն ձևով թէ՚ կռնածեւ եւ թէ՚ կլոր լիցքի յարմարցուած է եւ 25 փրանքով կրնայ պատրաստուիլ։

Հ. ԱՄ.

Առաջար. Արտիւրի.

1) *Գտէք ինձ համար մի երկաւանկ բառ,*
Որ պարունակէ միայն հինգ տառ
Այդ բառը լինի գոյական
Եւ ոչ բայ կամ ածական:

Փորձեցէք հանել առաջին տառը,
Դ և տ ի անուն կատանայ բառը.
Ցաւում եմ, որ պարակերէն
Դր լինի եւ ոչ հայերէն:

Դուրս ձգեցէք եւ երկրորդ տառը,
Մ է կ ի նշանակութիւն կատանայ բառը,
Լաւ էր եթէ հայերէն
Լինէր եւ ոչ ռուսերէն:

Թոյլ կուտամ վերցնել և երրորդ տառը
Փ ո ք ր կամ ք ի չ ցոյց կուտայ բառը
Ափսոս, որ տաճկերէն
Պլինէր եւ ոչ հայերէն:

Առաջ. Դ. Նար.

Մի քառ գիտեմ երկվանկանի,
Բացի դրանից երկմաստանի:
Առաջին վանկն է երկատառանի,
Հոգին ու հատատը կերակուրի,
Առանց որոյ նա կը լինի,
Ինչպէս ծաղիկ առանց հոգի:
Երկրորդ վանկն է չորս տառանի,
Մեր նախահարց շատ սիրելի.
Իրրեւ վերջին կէտ թուականի,
Թիւ անհամ՛ապ կը ցոյց տային:
Ամբողջովին իմ՛ սիրելի
Գեղեցկատեսիլ գեղեցդուհիների,
Որոնք կուժն ուսած լուսադէմին,
Բարի լոյս ասելու են ինձ գալի:

ՌԵԲՈՒՍ



Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան

Дозволено Цензурою Тифлисъ, 1890 г. 5-го октября

Типографія „Ароръ“ Т. Я. Назарьянъ, угол. Головин. пр. и Барят. ул.

գեղարեստական „արօր“ տպարանի
մամուլի տակից լոյս տեսան

ԲԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

I, II, III եւ IV (անտիպ)
մասերը:
Դիմն է ճանապարհածախսով,

3 ՐՈՒԲԼԻ·

ԲԱՍԿԱԿԱՆ ՂԳԴՆԴԱ

Հատոր 2 կոպէկ.

Յ· ՊԱՅԱՐԵԱՆ

ԳԻԻԼԷ

Մի ազիւած քիւրդերի կեանքից

Գինն է 15 կ.

ՅՈՎՍԷՓ Ա· Ք. ՕՐԲԵԼԻԻ

ՆԱԽԱՁԱՒԻՂ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉԻ

ՊՍՏԻԿ Է ԲԱՅՑ ՉՍՏԻԿ Է

Մրջիւնների կեանքից Հետաքրքրական:

Վ. ՓՓՓԱՉԵՆՑ

Թ Օ Փ Ա Լ

Տանձկահաս կեանքից.

Գինը 5 կ.

ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

1891 Թ.

Օրերս լոյս կտեսնեն.

1. *Ծոցի պատկերազարդ վիճակաթուղթ օրացոյց գինը 15 կ.*
2. *Սեղանի մեծաղիր 30 կ.*
3. *Կանանց համար յատկապէս „ „ 40 կ.*
4. *Պատի հատուածական վիճակաթուղթ „ „ 50 կ,*
5. *Դրպանի փոքրագիր, համառօտ „ „ 5 կ.*

Բոլոր 5 հրատարակութիւնների միասին բաժանորդ գրւողը ճանապարհածախս չի պէտք է վճարի:

„Աղբիւրի“ եւ „Տարազի“ բաժանորդները վճարում են ճանապարհածախսով 1—20 կ.

Դիմել „Աղբիւրի վաճառանոցին.

Тифлисъ. „Агбюръ“

АРОРЪ
художественная
ТИПОГРАФІЯ
ред. иллюстриров. журнал.
„Агбюръ“ и „Таразъ“
Въ Тифлисѣ
(Уг. Голов. пр. и Барят. у.)

печатаетъ на **русскомъ**, тузем. и *европейск.* языкахъ *КНИГИ*, **ГАЗЕТИ**, ЖУРНАЛИ, **БЛАНКИ**, **КОНТОРСКІЯ КНИГИ**, ВЫЗЫТНЫЯ КАРТОЧКИ. Пріемъ всевозможныхъ типографическихъ работъ, **приготовленіе клише для иллюстрацій**. **Печатаніе монограммъ для писемъ и пр.**

ՌԱՑՄԱԾ Է 1891 ԹՎԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գեղարուեստական-գրական երգիծաբանական

Պատկերազարդ շաբաթաթերթի.

Այսօր շաբաթի 27 հոկտեմբերի երկրիս Կառավարչապետը բարեհաճեց № 9361 ստորագրել

„ՏԱՐԱԶ“ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

բողոքուրիւնը:

Տարազ պատկերազարդ շաբաթաթերթը առաջիկայ 1891 թ. կը հրատարակի շաբաթը մի անգամ՝ ունենալով մանակցութեամբ մեր բոլոր աշխատակիցների եւ նկարիչների: №№ը լոյս կը տեսնեն ամեն կիրակի:

„Տարազ“ պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագրիւնը 6 ր. է, իսկ „Աղբիւրի“ բաժանորդների համար 5 ր.

Հանդամանութիւնները հետեւեալ անգամ:

Խմբագիր հրատ. Տիգրան Նազարեան

Հասցէն.

Тифлисъ. Редакція иллюстриров. еженѣд. „Таразъ“.

ԲԱՑԻԱԾ Է ԱՂԲԻՒՐԻ 1891 ԹԻՒԱԿ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԽՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կրճրատարակւի նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ նոյն աշխատակիցների մանակցութեամբ:

Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օրէոգրաֆիա

Ա Ն Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ի Ն

խոզ արածացնելիս

Աղբիւրի 6. արէմիան՝ մեր ապագայում նկարիչ ա. Դէրոյ գաղափարեան Ա Լ Ա Ն Ջ Ա Ն Ի Տ Ր մեծարիւ եւ շքեղ ծիրանեայ վիճակ կըզգի բաժանորդների մէջ անպատճառ կամ նոխազներ առնուած:

Աղբիւրի 9. արէմիան գալ 1892 թ. հանդէս դիւրութիւն մի ապահովագրական ընկերութեան մէջ մտնելու, որ ամէն տարի մի քանի հարիւր ռուբլի կը վճարէ ապահովագրուածներին, որոնց անասունները կամ տնտեսական գործիքները կը կորչին:

Մինչեւ դեկտեմբերի 1-ը բաժանորդ գրւողը կըստանայ Ա. պրէմիան աւելի շուտ քան № 1-ը, իսկ այնուհետեւ բաժանորդ գրւողը, վճարը մեզ հասած օրից մինչեւ մի տարի:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ պրէմիայից ստացած են արդէն 3000 օր.

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. է եւ պրէմիայի ճանապարհածախս պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա:

ապահիկ ոչ ոքից չի ընդունւում

Հասցէն՝ **Тифлисъ, редакція „АГБЮРЪ“**

Իսկ արտասահմանից՝ Tiflis, (Caucase) rédaction de la revue AGBUR

Խմբ.-հրատ. Տ. Նազարեան

ՀՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 11

Լազարեան Ճեմարան, Աղբիւրի տլրօմ.
Մանուկին (բանաստեղծութիւն) Ջ. Հալտղեանց
Մնձղուկ (Տուրգենեւից) Դ. Ֆ. Մկրտումեանց
Հէքիաթների անմահ ստեղծողը, Անդերսէնի դեանքից Ղ. Աղայեանց
Յովհաննէս Խ. Լազարեանց (պատկեր)
Տրտունջ (բանաստ.) Ֆ, Թադէոսեանց
Սպանուած հայրը (շար. և վերջ): Լէօ
Փիծ եղնակին (բանաստ.) Մ. Ճիւլատեան
Հալախանի Սիկուլի
Հալախանիի, ընդհանուր տեսքը Պատկերներ
Ամերիկական սեստեմով նէֆթի խոր Հանելուկ
Առաջարկութիւն
Նախընթաց №-ի մէջ եղած ուղղութեան բացատրութիւնը

Բ. ԲԱԺԻՆ

Աղբիւր եւ Տարազ
Ընտանիքը, տոմս Դր' Գասպարէնի Հ. Առաքելեան:

ԹԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Լազարեան Ճեմարանի 75-ամեակը: Մեր շնորհակալութիւնը: Նկրս. Երեւանէի, Ընշու դպր, տեսուչները: Նւագահանդէս: Երգչուհի Դը' Բուբինի:

Աղբիւրի պատասխաններ, Յայտարարութիւններ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ №-ի հետ ուղարկում ենք „Աղբիւրի“ եւ „Տարազի“ 1891 թ մանրամասն յայտարարական թերթ:

Խնդրում ենք մեր յարգելի բաժանորդներին, որոնք պիտի եւ առաջիկայ 1891 *թ. ստանան ‹ԱՂԲԻՒՐ› ու ‹ՏԱՐԱԶ›, բարեհաճին փութով նորոգել իրանց բաժանորդագրութիւնը, որպէսզի ժամանակ ունենանք հասցէները մատեան մուծելու եւ տպագրելու: Խնդրում ենք մեր մշտական բաժանորդներին, որ իրանց շրջանում տարածեն ‹ԱՂԲԻՒՐԸ› եւ „ՏԱՐԱԶԸ“ որով, միջոց կունենանք մեր հոստացածից աւելի շատ յաւելուածներ հրատարակել:*

Թէ ներկայ 1890 *թ. եւ թէ անցեալ տարիների մեր թերթերի բաժանորդագինը մինչեւ այժմ չի վճարողներին հրաւիրում ենք իրանց պարտքը շուտով ուղարկելու:*